The aim of this study was to investigate the joint use of music rhythms (classical and rock music) and information loads on mental efficiency and attentiveness of students with the use of computer technology. And classical, and rock music cause a noticeable increase in performance of the proof-test speed, which requires a high level of concentration, at the same time, impair indicators performance efficiency of the test. On a background of classical music these processes are accompanied by an increase in parasympathetic tone of VNS.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Բնական գիտություններ №1 (30) 2017 Естественные науки

ՀՏԴ 539.1

Er<sup>3+</sup> ԻՈՆԻ (4f<sup>11</sup>) ՌԱԿԱՅԻ ԳԵՆԵԱԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ  
Գ. Գ. ԴԵՄԻՐԽԱՆՅԱՆ, Հ. Գ. ԴԵՄԻՐԽԱՆՅԱՆ, Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,  
0010, Երևան, Տիգրան Մեծի 17  
e-mail: gdemirkhanyan@gmail.com

Հաշվարկված են Er<sup>3+</sup> իոնի հիմնական էլեկտրոնային կոնֆիգուրացիայի (4f<sup>11</sup>) թերմերի Ռակայի գենեալոգիական գործակիցները, որոնց միջոցով արտահայտվում են բազմաէլեկտրոնային համակարգի էլեկտրոնային վիճակների միջև քվանտային անցումները նկարագրող մատրիցական էլեմենտները: 4f<sup>11</sup> կոնֆիգուրացիայի բոլոր թերմերի Ռակայի գործակիցների թվային արժեքները թույլ են տալիս կառուցել Er<sup>3+</sup> իոնի Շտարկյան վիճակների ալիքային ֆունկցիաները և դրանց հենքի վրա որոշել Er<sup>3+</sup> պարունակող բյուրեղների հիմնական սպեկտրադիտական բնութագրերը:

**Բանալի բառեր.** գենեալոգիական գործակիցներ, էլեկտրոնային կոնֆիգուրացիա, հազվագյուտ հողի տարր, թենզորական օպերատորի մատրիցական էլեմենտ, 6j սիմվոլ  
**Ներկայացված է խմբագրություն 12.10.2016թ.**

Հազվագյուտ հողի (RE<sup>3+</sup>) խմբի Er<sup>3+</sup> (4f<sup>11</sup>) իոնով լեգիրված բյուրեղների (LiNbO<sub>3</sub>:Er<sup>3+</sup>, YAG:Er<sup>3+</sup>, LaF<sub>3</sub>:Er<sup>3+</sup> և այլն) հենքի վրա աշխատող լազերները (այդ թվում, բազմաֆունկցիոնալ լազերները) ներառում են ճառագայթվող ալիքի լայն տիրույթ (0.5 – 4 մկմ), ուստի դրանք կիրառական և տեսական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Մասնավորապես, այդ նյութերը հնարավորություն են տալիս ստեղծել լազերային հովացնող (laser cooling) համակարգեր [1], որոնք կարող են բանող մարմին հանդիսանալ ջերմաստիճանային սենսորների [2] և լիդարների համար [3]: Այդուհանդերձ, չնայած Er<sup>3+</sup> իոններով լեգիրված բազմաթիվ նյութերի (բյուրեղների և ապակիների) սպեկտրադիտական հատկությունների լայնածավալ փորձարարական հետազոտությունների արդյունքում կուտակված տվյալների հարուստ պաշարի [4], այդ նյութերի սպեկտրադիտական հատկությունների մանրակրկիտ տեսական ուսումնասիրությունները կապված կլանման և առաքման սպեկտրների Շտարկյան կառուցվածքի, միջտարկյան անցումներով պայմանավորված սպեկտրադիտական և կինետիկական բնութագրերի որոշման հետ սակավ են:

Խառնուրդային նյութերի սպեկտրյալ հատկությունների տեսական ուսումնասիրումը ներառում է հետևյալ հիմնարար խնդիրների լուծումը.

1. Շտարկի խնդրի լուծումը, որի արդյունքում որոշվում են տվյալ բյուրեղի դաշտում (ԲԴ) խառնուրդային իոնի շտարկյան մակարդակների էներգիաները, կառուցվում են Շտարկյան վիճակների ալիքային ֆունկցիաները:
2. Տվյալ բյուրեղում խառնուրդային իոնի մուլտիպլետների, ինչպես նաև Շտարկյան վիճակների միջև էլեկտրա- և մագնիսադիպոլային անցումների հավանականությունների հաշվում:

Նշված խնդիրների լուծումներն ի վերջո հանգում են  $\langle LSJM|r^k Y_{kq}|L'S'J'M'\rangle$  տիպի



մատրիցական էլեմենտների հաշվման, ինչը կարելի է իրականացնել, այսպես կոչված Ռակայի գենեալոգիական սխեմայով: Այն է, նախ սֆերիկ ֆունկցիայի,  $r^k Y_{kq}$ , մատրիցական էլեմենտից պետք է անցնել միավոր չբերվող թենզորական օպերատորի  $U_{kq}$  մատրիցական էլեմենտի

$$\langle LSJM | r^k Y_{kq} | L'S'J'M' \rangle = (-1)^{k+f} \sqrt{\frac{(2f+1)(2k+1)}{4\pi}} \overline{r^k} C_{f0 k0}^{f0} \langle LSJM | U_{kq} | L'S'J'M' \rangle, \quad (1)$$

ապա, կիրառելով Վիգներ-Էկկարտի թեորեմը, անջատել մատրիցական էլեմենտի կախումը լրիվ անկյունային մոմենտի պրոյեկցիայից

$$\langle LSJM | U_{kq} | L'S'J'M' \rangle = \frac{1}{\sqrt{2J'+1}} C_{JM kq}^{J'M'} \langle LSJ || U_k || L'S'J' \rangle: \quad (2)$$

Այստեղ  $L - \rho$ ,  $S - \rho$  և  $J - \rho$  ն, համապատասխանաբար, խառնուրդային իոնի ուղեծրային, սպինային և լրիվ անկյունային մոմենտներն են,  $M - \rho$  և  $J - \rho$  պրոյեկցիան է,  $\overline{r^k}$ -ն խառնուրդային իոնի օպտիկական էլեկտրոնի շառավիղ-վեկտորի  $k$ -րդ աստիճանի միջին արժեքն է,  $C_{JM kq}^{J'M'}$ -ը՝ Կլեբշ-Գորդանի գործակիցը: Բերված մատրիցական էլեմենտը,  $\langle LSJ || U_k || L'S'J' \rangle$ , հաշվարկվում է Ռակայի բանաձևով.

$$\langle LSJ || U_k || L'S'J' \rangle = (-1)^{S+k+J+L'} N \delta_{S,S'} \sqrt{(2J+1)(2J'+1)(2L+1)(2L'+1)} \times \\ \times \left\{ \begin{matrix} J & k & J' \\ L' & S & L \end{matrix} \right\} \sum_{L_1, S_1} (-1)^{L_1} \left\{ \begin{matrix} L & f & L_1 \\ f & L' & k \end{matrix} \right\} G(f^N SL; f^{N-1} S_1 L_1) G(f^N S'L'; f^{N-1} S_1 L_1): \quad (3)$$

որտեղ  $\left\{ \begin{matrix} J & k & J' \\ L' & S & L \end{matrix} \right\}$ -ը  $6j$  սիմվոլն է,  $G(f^N SL; f^{N-1} S_1 L_1)$ -ն էլեկտրոնային  $4f^N$  կոֆիգուրացիայի վիճակները  $4f^{N-1}$  կոֆիգուրացիայի վիճակների հետ կապող Ռակայի գենեալոգիական գործակիցներն են: Կլեբշ-Գորդանի գործակիցների և  $6j$  սիմվոլների արժեքների մի մասն ամրագրված է [5]-ում, մնացածը հեշտությամբ հաշվվում է “Mathematica” ծրագրային փաթեթի միջոցով: Ռակայի գենեալոգիական գործակիցների թվային արժեքները հազվագյուտ հողի խմբի իոնների հիմնական  $4f^N$  ( $N \square 7$ ) էլեկտրոնային կոնֆիգուրացիաների համար բերված են [6]-ում: Իսկ կեսից ավելի ( $N \square 7$ ) լրացված էլեկտրոնային կոնֆիգուրացիաների գենեալոգիական գործակիցները կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով [6]

$$G(f^{14-n} SL; f^{13-n} S'L') = (-1)^{S+L+S'+L'-f-\frac{1}{2}} \sqrt{\frac{(n+1)(2S'+1)(2L'+1)}{(14-n)(2S+1)(2L+1)}} G(f^{n+1} S'L'; f^n SL) \quad (4)$$

[7] - ում որոշված են  $Ho^{3+}$  ( $4f^{10}$ ) և  $Er^{3+}$  ( $4f^{11}$ ) իոնների, համապատասխանաբար,  $^5I$ ,  $^5F$ ,  $^5S$  և  $^4I$ ,  $^4F$  թերմերի համար գենեալոգիական գործակիցները: Սակայն  $Er^{3+}$ -ով լեզբրված բյուրեղների սպեկտրադիտական բնութագրերի հաշվման համար անհրաժեշտ են  $4f^{11}$  կոֆիգուրացիայի բոլոր թերմերի Ռակայի գործակիցները: Ուստի, տվյալ հոդվածում բերվում են  $Er^{3+}$  իոնի մնացած՝  $^4S$ ,  $^4D$ ,  $^4G$ ,  $^2P$ ,  $^2D_1$ ,  $^2D_2$ ,  $^2F_1$ ,  $^2F_2$ ,  $^2G_1$ ,  $^2G_2$ ,  $^2H_1$ ,  $^2H_2$ ,  $^2I$ ,  $^2K$ ,  $^2L$  թերմերի Ռակայի գործակիցների հաշվարկված թվային արժեքները:

Թվային արժեքները համառոտ գրառման նպատակով կիրառված է գաղտնագրման հայտնի եղանակը [6,7], ըստ որի  $a_0; a_1 a_2 a_3 a_4; a_5 a_6 a_7 a_8; a_9$  գաղտնագրումը վերծանվում է

$$a_0 \left[ \prod_{i=1}^9 p_i^{a_i} \right]^{\frac{1}{2}} \quad (5)$$

բանաձևի միջոցով, որտեղ  $a_0 = \pm 1$  որոշում է թվի նշանը,  $p_i$  -ն  $i$ -րդ պարզ թիվն է պարզ թվերի շարքում՝ 2, 3, 5, 7, 11, 13, 17, 19, 23, ...: Այսպես, օրինակ, -1; -3 0 1 0; -1 գաղտնագրի

վերծանումն է

$$-\sqrt{2^{-3}3^05^17^011^{-1}} = -\sqrt{\frac{5}{8 \cdot 11}} = -\frac{1}{2}\sqrt{\frac{5}{22}}$$

Ռակայի գործակիցների թվային արժեքները գաղտնագրված տեսքով ներկայացված են ստորև բերված են աղյուսակում:

Աղյուսակ 4f<sup>11</sup> կոնֆիգուրացիաների միամասնիկ գենետալոգիական գործակիցները

4f <sup>11</sup>	4f <sup>10</sup>	G(f <sup>11</sup> ; f <sup>10</sup> )	4f <sup>11</sup>	4f <sup>10</sup>	G(f <sup>11</sup> ; f <sup>10</sup> )	4f <sup>11</sup> <sub>1</sub>	4f <sup>10</sup>	G(f <sup>11</sup> ; f <sup>10</sup> )	
4S	5F	-1; 0010; -1	4G	3G <sub>2</sub>	1;3-10-1;-1-1	2D <sub>1</sub>	3G <sub>3</sub>	1;10-1-1	
	3F <sub>1</sub>	1; 01-10; -1		3G <sub>3</sub>	1;1-100;-2		3H <sub>1</sub>	1;1-1-1-2	
	3F <sub>2</sub>	-1; 03-10; -1		3H <sub>1</sub>	-1;-1-10-1;-11		3H <sub>2</sub>	-1;9-3-1-2	
4D	5D	-1; 101-1;-1	4G	3H <sub>2</sub>	1;-1-20-1;-11	2D <sub>1</sub>	3H <sub>3</sub>	1;-2-31-1;01	
	5F	-1; -3010;-1		3H <sub>3</sub>	1;2-300;-1		3H <sub>4</sub>	-1;3-2-1-2;01	
	5G	1; -3111;		3H <sub>4</sub>	-1;100-1;-1		1D <sub>1</sub>	-1;31-1-2;-1	
	3P <sub>1</sub>	-1; 02-1-1;-1		3I <sub>1</sub>	1;-3-100;-21		1D <sub>2</sub>	-1;90-1-1;-1	
	3P <sub>2</sub>	-1; 00-1-1;-1		3I <sub>2</sub>	1;3-200;-21		1D <sub>3</sub>	-1;-240-3	
	3P <sub>3</sub>	-1;00-1-1;-1		3K <sub>1</sub>	-1;2-210;-2		1F	-1;-310-1	
	3D <sub>1</sub>	-1; 100-2;-1		3K <sub>2</sub>	-1;0-210;-201		1G <sub>1</sub>	1;-12-1-2;	
	3D <sub>2</sub>	1; 010-2;					1G <sub>2</sub>	1;51-1-3;	
	4D	3F <sub>1</sub>	-1; -2-1-11; -1	2P	3D <sub>1</sub>	1;211-2;-1	2D <sub>2</sub>	1G <sub>3</sub>	-1;-33-1-1;-11
		3F <sub>2</sub>	1; -3-310;-1		3D <sub>2</sub>	1;-101-2		1H <sub>1</sub>	1;-10-1-1;02
		3F <sub>3</sub>	1; -1-200;		3F <sub>1</sub>	-1;-11-10;-1		3P <sub>1</sub>	1;01-1-2;
		3F <sub>4</sub>	1; -1-3-10; 01		3F <sub>2</sub>	-1;11-10;-1		3P <sub>2</sub>	1;-21-1-2;
		3G <sub>1</sub>	1; -310-2;		3F <sub>3</sub>	-1;-3000;		3P <sub>3</sub>	1;-21-1-2;-102
		3G <sub>2</sub>	1; -10-1-2;-11		3G <sub>1</sub>	-1;110-2		3D <sub>1</sub>	-1;-130-3
		3G <sub>3</sub>	-1;-1-3-10;01		3G <sub>2</sub>	-1;-22-1-2;-11		3D <sub>2</sub>	1;-222-3;-1
		3H <sub>1</sub>	-1; 1-1-1-1;		1D <sub>1</sub>	1;000-1;-1		3F <sub>3</sub>	1;110-1;-1
3H <sub>2</sub>		1; 1-3-1-1;	1D <sub>2</sub>		-1;210-2;-1	3F <sub>4</sub>		1;-12-1-1;-11	
3H <sub>3</sub>		-1; 0-3-10; 01	1D <sub>3</sub>		1;-1-11-2	3G <sub>1</sub>		-1;320-3;-1	
3H <sub>4</sub>		-1;1-2-1-1;01	1F		-1;-3-100;	3G <sub>2</sub>		-1;11-1-3;01	
4G		5D	1; -3-12-1;		2D <sub>1</sub>	1G <sub>1</sub>		-1;-10-1-1;	2G <sub>1</sub>
	5F	-1; -3010;-1	1G <sub>2</sub>	1;21-1-2		3H <sub>1</sub>	-1;-15-1-2;-1		
	5G	-1;-302-1;-2	1G <sub>3</sub>	-1;-311-2;01		3H <sub>2</sub>	-1;-34-1-2;-1		
	5I	1;-3-111;-21	3P <sub>1</sub>	1;02-1-2;-1		3H <sub>3</sub>	1;-22-1-1;-11		
	3P <sub>1</sub>	1;-10-1-1;	3P <sub>2</sub>	-1;80-1-2;-1		3H <sub>4</sub>	1;311-2;-11		
	3P <sub>2</sub>	-1;-1-2-1-1	3P <sub>3</sub>	-1;20-1-2;		1D <sub>1</sub>	1;-12-1-2		
	3P <sub>3</sub>	-1;1-21-1;-1	3D <sub>1</sub>	-1;700-3;-1		1D <sub>2</sub>	-1;-53-1-3;		
	3D <sub>1</sub>	1;-3-11-2;	3D <sub>2</sub>	-1;-212-3;		1D <sub>3</sub>	-1;-212-3;-1		
	3D <sub>2</sub>	1;2-21-2;-1	3F <sub>1</sub>	-1;-1-1-11;-1		1D <sub>4</sub>	1;5000;-11		
	3F <sub>1</sub>	-1;1-1-10;-1	3F <sub>2</sub>	1;3-3-11;-1		1F	-1;100-1;-1		
	3F <sub>2</sub>	1;-3-3-10;-1	3F <sub>3</sub>	-1;-3-22-1;		1G <sub>1</sub>	1;31-1-2;-1		
	3F <sub>3</sub>	1;3-100;-1	3F <sub>4</sub>	-1;1-3-1-1;01		1G <sub>2</sub>	-1;-12-1-3;-1		
3F <sub>4</sub>	1;1-310;-21	3G <sub>1</sub>	1;310-3;	1G <sub>3</sub>	1;10-1-3;01				
3G <sub>1</sub>	-1;-303-1;-1	3G <sub>2</sub>	-1;-301-3;-11	1G <sub>4</sub>	-1;-10-10;-11				
4f <sup>11</sup>	4f <sup>10</sup>	G(f <sup>11</sup> ; f <sup>10</sup> )	4f <sup>11</sup>	4f <sup>10</sup>	G(f <sup>11</sup> ; f <sup>10</sup> )	4f <sup>11</sup>	4f <sup>10</sup>	G(f <sup>11</sup> ; f <sup>10</sup> )	
2D <sub>2</sub>	1H <sub>1</sub>	-1;-21-1-1;-11	2G <sub>1</sub>	3D <sub>2</sub>	-1;2-23-3;-1	2G <sub>2</sub>	3H <sub>3</sub>	-1;30-1-1;0-1	
	1H <sub>2</sub>	1;-10-11;-1		3F <sub>1</sub>	-1;-1-1-11;-1		3H <sub>4</sub>	-1;-4-1-1-2;0-101	

${}^2F_1$	${}^3P_1$	1;-111-1;-1		${}^3F_2$	1;1-1-11;-1		${}^3I_1$	-1;-201-1;-1
	${}^3F_1$	1;-1010;-1		${}^3F_3$	-1;1-22-1;-2		${}^3I_2$	1;-1-13-1;-1
	${}^3H_1$	1;-101-1		${}^3F_4$	1;3-31-1;-21		${}^3K_1$	1;310-1;-1-1
	${}^1S_1$	1;100-1;-1		${}^3G_1$	-1;303-3;-2		${}^3K_2$	1;110-1;-1-11
	${}^1D_1$	1;-1-12-1;-1		${}^3G_2$	-1;1-12-3;-1		${}^1D_1$	1;2-1-1-2;-11
	${}^1G_1$	1;-111-1;-1		${}^3G_3$	1;3-10-1;-2		${}^1D_2$	-1;-60-1-3;-11
${}^2F_2$	${}^3P_1$	1;-211-1;	${}^2G_2$	${}^3H_1$	1;-1-10-2;-11	${}^2H_1$	${}^1D_3$	1;1-20-3;01
	${}^3P_2$	1;-41-1-1;		${}^3H_2$	-1;7-30-2;-11		${}^1D_4$	-1;-6100
	${}^3P_3$	-1;-411-1;-1		${}^3H_3$	-1;2-32-1;-1		${}^1F$	-1;-2-21-1;-11
	${}^3D_1$	1;-201-2;		${}^3H_4$	-1;300-1;-1		${}^1G_1$	1;20-1-2;-11
	${}^3D_2$	-1;-3110;-1		${}^3I_1$	-1;3-10-1;-11		${}^1G_2$	-1;-21-1-3;-11
	${}^3F_3$	1;-1100;-1		${}^3I_2$	1;5-10-1;-21		${}^1G_3$	-1;-2-1-1-3; 0000; 2
	${}^3G_1$	1;220-2;-2		${}^3K_1$	1;2-23-1;-1		${}^1G_4$	1;-2-1-10;-1
	${}^3G_2$	-1;-211-2;01		${}^3K_2$	-1;2-21-1;-201		${}^1H_1$	1;3-1-1-1;0-1
	${}^3G_3$	-1;0110;-2		${}^1D_1$	1;-100-2		${}^1H_2$	1;-2-2-11
	${}^3H_1$	-1;-22-1-1;-1		${}^1D_2$	1;5-10-3		${}^1I_1$	1;-2-100;-1
	${}^3H_2$	-1;-41-1-1;-1		${}^1D_3$	-1;111-3;-1		${}^1I_2$	-1;-600-1;-1
	${}^3H_4$	-1;-411-1;-11		${}^1F$	-1;110-1;-2		${}^1I_3$	-1;-4-101;-101
	${}^3I_1$	-1;-2000;-21		${}^1G_1$	-1;-111-2;-2		${}^1K$	-1;210-1;-1-100; 1
	${}^3I_2$	-1;-2100;-21		${}^1G_2$	-1;502-3;-2		${}^2H$	${}^3D_1$ 1;3-11-2;-1
	${}^1S_2$	1;100-1;-1		${}^1G_3$	-1;120-3;-1		${}^3D_2$	-1;241-2;-2
	${}^1D_1$	-1;-2-10-1		${}^1H_1$	-1;200-1;-1		${}^3F_1$	-1;-11-10;-1
	${}^1D_2$	1;-600-2		${}^1I_1$	1;-10-10;-21		${}^3F_2$	-1;11-10;-1
	${}^1D_3$	1;101-2;-1		${}^1I_2$	1;5-1-1-1;-21		${}^3F_3$	1;-2100;-2
	${}^1D_4$	1;-611-1;-11		${}^1K$	1;211-1;-2		${}^3G_1$	1;111-2;-21
	${}^1G_1$	-1;21-1-1;-1		${}^3P_1$	-1;-210-2;-11		${}^3G_2$	-1;-340-2;-1
	${}^1G_2$	1;-22-1-2;-2		${}^3P_2$	-1;-410-2;-11		${}^3H_3$	1;-1100;-1
	${}^1G_3$	1;-201-2;-11		${}^3P_3$	-1;-410-2;01		${}^3I_1$	-1;2-100;-11
	${}^1G_4$	1;-201-1;-21		${}^3D_1$	-1;-200-3;01		${}^3K_1$	1;-1210;-2
	${}^1H_2$	1;-1010;-1		${}^3D_2$	-1;1-10-3;01		${}^3L$	-1;-2100; 001
${}^1I_1$	1;-2-1-11;-21	${}^3F_3$	1;-2-11-1;-11	${}^1D_1$	1;1-10-1; -1			
${}^1I_2$	-1;-60-10;-21	${}^3F_4$	-1; 200-1;1	${}^1D_2$	-1;5-10-2; -1			
${}^1I_3$	1;-601-1;011	${}^3G_1$	-1;210-3;-11	${}^1D_3$	-1;211-2; -2			
${}^2G_1$	${}^3P_1$	-1;-10-1-2;	${}^3G_2$	-1;-20-1-3;0000;2	${}^1F$	-1;-3100; -2		
	${}^3P_2$	1;7-2-1-2;	${}^3G_3$	-1;00-1-1;-11	${}^1G_1$	1;-100-1; -21		
	${}^3P_3$	-1;3-21-2;-1	${}^3H_1$	-1;-21-1-2;	${}^1G_2$	-1;310-2; -21		
	${}^3D_1$	1;3-11-3;	${}^3H_2$	-1;-420-3;	${}^1G_3$	-1;-530-2; -1		
$4f^{11}$	$4f^{10}$	$G(f^{11}; f^{10})$	$4f^{11}$	$4f^{10}$	$G(f^{11}; f^{10} S'L')$	$4f^{11}$	$4f^{10}$	$G(f^{11}; f^{10})$
${}^2H_1$	${}^1H_1$	1;-2000;-1	${}^2I$	${}^3F_4$	-1;1-311;-2-1	${}^2K$	${}^1G_4$	-1;-11-12;-2-1
	${}^1I_1$	-1;0-2-11;-21		${}^3G_1$	-1;310-1;-2		${}^1H_1$	-1;00-1-1;1-1
	${}^1I_2$	1;4-1-10;-21		${}^3G_2$	-1;-303-1;-1-1		${}^1H_2$	-1;-3-1-11;-1
	${}^1K$	1;-2110;-2		${}^3G_3$	-1;101-1;-2		${}^1I_1$	-1;-10-10;-201
${}^1L_1$	-1;-2000;-101	${}^3H_1$	-1;0-1-10;-1	${}^1I_2$	1;51-1-1;-201			
${}^2H_2$	${}^3D_1$	-1;-1-10-1;-11	${}^3H_2$	1;8-3-10;-1	${}^1I_3$	-1;-3-1-14;-2		
	${}^3D_2$	-1;-240-1;-2	${}^3H_3$	-1;-1-33-1;-1-1	${}^1K$	1;-300-1;-1-11		
	${}^3F_4$	1;-1101;-2	${}^3H_4$	-1;2-210;-1-1	${}^1L_1$	-1;-3001;-1-111		
	${}^3G_1$	1;310-1;-2	${}^3I_1$	1;400-1;-2	${}^1L_2$	-1;-10-11;-1-11		

	<sup>3</sup> G <sub>2</sub>	1;32-1-1;-1-1		<sup>3</sup> I <sub>2</sub>	-1;210-1;-2	<sup>2</sup> L	<sup>1</sup> N	1;-3-100;1001
	<sup>3</sup> G <sub>3</sub>	-1;-12-11;-2		<sup>3</sup> K <sub>1</sub>	-1;-203-1;-2-11		<sup>3</sup> H <sub>1</sub>	-1;-11-10;-1
	<sup>3</sup> H <sub>1</sub>	-1;-11-10;-1		<sup>3</sup> K <sub>2</sub>	-1;601-1;-2-1		<sup>3</sup> H <sub>2</sub>	-1;-31-10;-1
	<sup>3</sup> H <sub>2</sub>	-1;-31-10;-1		<sup>3</sup> L	-1;-201-1;-1-11		<sup>3</sup> H <sub>3</sub>	-1;011-1;-1-1
	<sup>3</sup> H <sub>3</sub>	-1;-21-1-1;-1-12		<sup>3</sup> M	-1;200-1;-1-101		<sup>3</sup> H <sub>4</sub>	-1;-3210;-1-1
	<sup>3</sup> H <sub>4</sub>	1;-36-10;-1-1		<sup>1</sup> F	1;-3101;-2		<sup>3</sup> I <sub>1</sub>	-1;-120-1;-1
	<sup>3</sup> I <sub>1</sub>	1;0-11-1;-2		<sup>1</sup> G <sub>1</sub>	1;-12-10;-2		<sup>3</sup> I <sub>2</sub>	-1;-330-1;-1
	<sup>3</sup> I <sub>2</sub>	-1;021-1;-2		<sup>1</sup> G <sub>2</sub>	1;51-1-1;-1		<sup>3</sup> K <sub>1</sub>	-1;-321-1;-1-101
	<sup>3</sup> K <sub>1</sub>	1;020-1;0-1		<sup>1</sup> G <sub>3</sub>	-1;-331-1;-1-1		<sup>3</sup> K <sub>2</sub>	-1;-121-1;-1-1-11
	<sup>3</sup> K <sub>2</sub>	-1;220-1;-1-11		<sup>1</sup> H <sub>1</sub>	-1;-101-1;-1-1		<sup>3</sup> L	1;-110-1;-1-101
	<sup>3</sup> L	1;011-1;-2-11		<sup>1</sup> I <sub>1</sub>	1;21-10;-2		<sup>3</sup> M	1;-3101;-10-11
	<sup>1</sup> D <sub>1</sub>	1;-1-2-10;-11		<sup>1</sup> I <sub>2</sub>	1;80-1-1;-1		<sup>1</sup> H <sub>1</sub>	1;001-1;-1-1
	<sup>1</sup> D <sub>2</sub>	-1;-5-1-1-1;-11		<sup>1</sup> K	-1;-231-1;-1-11		<sup>1</sup> H <sub>2</sub>	-1;-311-1;-1
	<sup>1</sup> D <sub>3</sub>	1;-2101;-21		<sup>1</sup> L <sub>1</sub>	-1;-130-1;-1-11		<sup>1</sup> I <sub>1</sub>	1;-11-10;-1
	<sup>1</sup> D <sub>4</sub>	1;-5200;-2		<sup>3</sup> G <sub>1</sub>	-1;310-1;-2		<sup>1</sup> I <sub>2</sub>	-1;-52-1-1;-1
	<sup>1</sup> G <sub>1</sub>	-1;30-10;-1		<sup>3</sup> G <sub>2</sub>	-1;32-1-1;-1-1		<sup>1</sup> I <sub>3</sub>	-1;-5210;-10-1
	<sup>1</sup> G <sub>2</sub>	1;-11-1-1;-2		<sup>3</sup> G <sub>3</sub>	-1;14-1-1;-2		<sup>1</sup> K	1;111-1;-1-201
	<sup>1</sup> G <sub>3</sub>	-1;31-1-1;-1-1		<sup>3</sup> H <sub>1</sub>	-1;-11-10;-1		<sup>1</sup> L <sub>1</sub>	-1;-300-1;-1001
	<sup>1</sup> G <sub>4</sub>	-1;-11-10;-2-1 02		<sup>3</sup> H <sub>2</sub>	-1;-31-10;-1		<sup>1</sup> L <sub>2</sub>	1;-101-1;-1
	<sup>1</sup> H <sub>1</sub>	1;-20-1-1;-1-12		<sup>3</sup> H <sub>3</sub>	1;01-1-1;1-1		<sup>1</sup> N	1;-3000;00-11
	<sup>1</sup> H <sub>2</sub>	1;-11-1-1;-1		<sup>3</sup> H <sub>4</sub>	1;-30-10;-1-1			
	<sup>1</sup> I <sub>1</sub>	-1;0-200;-2		<sup>3</sup> I <sub>1</sub>	1;-110-1;-201			
	<sup>1</sup> I <sub>2</sub>	1;-4-10-1;-2		<sup>3</sup> I <sub>2</sub>	-1;-302-1;-201			
	<sup>1</sup> I <sub>3</sub>	-1;-4100;-201		<sup>3</sup> K <sub>1</sub>	-1;-310-1;-1-11			
	<sup>1</sup> K	-1;010-1;0-1		<sup>3</sup> K <sub>2</sub>	1;-110-1;1-1			
	<sup>1</sup> L <sub>1</sub>	-1;001-1;-2-11		<sup>3</sup> L	1;-310-1;-1-111			
	<sup>1</sup> L <sub>2</sub>	1;2001;-2-111		<sup>3</sup> M	-1;-310-1;-1001			
<sup>2</sup> I	<sup>3</sup> F <sub>1</sub>	-1;-1-1-11;-1	<sup>1</sup> G <sub>1</sub>	1;30-10;-2				
	<sup>3</sup> F <sub>2</sub>	1;3-3-11;-1	<sup>1</sup> G <sub>2</sub>	-1;-11-1-1;-2				
	<sup>3</sup> F <sub>3</sub>	1;-3-221;-2	<sup>1</sup> G <sub>3</sub>	1;31-1-1;-1-1				

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. C.E.Mungan, T.R. Gosnell. Advances in Atomic, Mol. and Opt. Phys., 40:161-228, 1999:
2. Ruan X.L., Kaviany M., Phys. Rev. B 73, 2008, p. 155422-28:
3. B. M. Walsh, H. R. Lee, N. P. Barnes, J. of luminescence, v.169, p.400-405, 2016:
4. R. Reisfeld, AIMS Materials Science, v. 2, N2, p. 37-60, 2015,
5. Д. А. Варшалович, А. Н. Москалев, В. К. Херсонский, *Квантовая теория углового момента*, Л. Наука, 1975, 436 с.:
6. C.W.Nielson, G.F. Köster, “*Spectroscopic coefficients for p<sup>n</sup>, d<sup>n</sup> and f<sup>n</sup> configurations*”, Cambridge, Massachusetts, “The MIT Press”, 1963:
7. Հ.Գ.Դեմիրիսյան, Ա.Հ. Մկրտչյան, Ա.Հ. Բաղդասյան, ՀՊՄՀ գիտ. տեղեկագիր, N 2-3 (24-25), 38-43, 2015:

## РЕЗЮМЕ

### РАСЧЕТ ГЕНЕАЛОГИЧЕСКИХ КОЭФФИЦИЕНТОВ РАКА ДЛЯ ИОНА $Er^{3+}$

*Г.Г.ДЕМИРХАНИЯН, А.Г.ДЕМИРХАНИЯН, А.А.АРУТЮНЯН*

В работе рассчитаны генеалогические коэффициенты Рака термов основной электронной конфигурации ( $4f^{11}$ ) иона  $Er^{3+}$ , посредством которых выражаются матричные элементы квантовых переходов между электронными состояниями многоэлектронной системы. Приведенные численные значения коэффициентов Рака всех термов  $4f^{11}$  конфигурации позволяют построить волновые функции штарковских состояний иона  $Er^{3+}$  и на их основе определить основные спектроскопические характеристики  $Er^{3+}$  содержащих кристаллов.

## SUMMARY

### CALCULATIONS OF RACAH'S GENEALOGICAL COEFFICIENTS FOR $Er^{3+}$ ION

*G.G.DEMIRKHANYAN, H.G.DEMIRKHANYAN, A.H.HARUTYUNYAN*

The Racah's genealogical coefficients for all terms of ground electronic configuration ( $4f^{11}$ ) of  $Er^{3+}$  ion through which it is expressed the matrix elements of quantum transitions between electronic states of many-electron system are calculated. The numerical values of Racah's coefficients of  $4f^{11}$  configuration permit to construction the wave functions of  $Er^{3+}$  ion's Stark states and on the basis of it to determine the main spectroscopical characteristics for  $Er^{3+}$  comprising crystals.

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Բնական գիտություններ №1 (30) 2017 Естественные науки

ՀՏԴ 52

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ԲԵՎԵՌԱՅԻՆ ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ  
ԲԱՇԽՄԱՆ ԷՄՊԻՐԻԿ ԲԱՆԱԶԵՎ  
*Ա.Ս.ԹԱՐՈՅԱՆ, Ա.Խ.ԱՍՍՏԸՅԱՆ, Լ.Վ.ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ն.Ն.ՄԽԻԹԱՐՅԱՆ*

*Խ.Արոյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17  
e-mail: arsen.taroyan@mail.ru*

*Աշխատանքում հետազոտվել է տիեզերական ճառագայթումների ուժգնության անկունային  
բաշխումը, և դուրս է բերվել նրանց բաշխման էմպիրիկ համընդհանուր բանաձև:*

***Բանալի բառեր.** Տիեզերական ճառագայթումներ, ճառագայթակտիվ հոսքի ուժգնություն և  
նրա անկունային բաշխում:*


***Ներկայացված է խմբագրություն 22.06.2016 թ***

Տիեզերքից դեպի երկիր գալիս են մեծ էներգիայով (մոտավորապես  $10^6$ -ից մինչև  $10^{20}$  էՎ) օժտված ճառագայթումներ, որոնք կայուն մասնիկներից են և կոչվում են **առաջնային տիեզերական ճառագայթներ**: Մտնելով Երկրի մթնոլորտ, և փոխազդելով մթնոլորտի մոլեկուլների ատոմների միջուկների հետ, առաջացնում են նոր տարրական մասնիկներ, որոնք կոչվում են **երկրորդային տիեզերական ճառագայթներ**: Առաջնային տիեզերական ճառագայթները (հիմնականում պրոտոնները), բացի Արեգակից, չունեն առաքման ինչ-որ որոշակի, եզակի կետային աղբյուր: Դրա ապացույցն այն է, որ Երկիր մոլորակի օրական պտույտի ընթացքում դեպի երկիր եկող տիեզերական ճառագայթումների ուժգնությունը չի փոխվում: Առաջնային տիեզերական ճառագայթման ճնշող մասը՝ բարձր էներգիայով տիեզերական ճառագայթները Երկիր են գալիս Մետազալակտիկայից, և դրանց չնչին մասն է կապված Արեգակի ակտիվության հետ:

Տիեզերքից եկող առաջնային տիեզերական ճառագայթումները (օրինակ պրոտոնը, կամ  $\alpha$ -մասնիկը) ունենալով համեմատաբար մեծ զանգված և էներգիայի մեծ պաշար ( $10^{15}$  էՎ կարգի), ծովի մակերևույթից 15÷20կմ բարձրություններում, օդի մոլեկուլների ատոմների միջուկների հետ, բախման արդյունքում առաջացնում է մեծ թվով միջուկաակտիվ մասնիկներ, հիմնականում՝  $\pi$ -մեզոններ՝ դրական, բացասական և չեզոք (պիոններ): Դրական և բացասական լիցքակիր պիոնները ունեն 273 էլեկտրոնի զանգված, և միջուկաակտիվ ադրոնների խմբում ամենափոքր զանգվածով մասնիկներն են: Լիցքակիր պիոնները իրենց հերթին բախվելով օդի ատոմների միջուկների հետ առաջացնում են երկրորդային պիոններ, սրանք էլ առաջացնում են երրորդ սերնդի պիոններ և այլն: Մակայն պիոնները լինելով անկայուն և ունենալով կյանքի տևողության փոքր արժեք տրոհվում են: Օրինակ բացասական պիոնը տրոհվում է ոչ միջուկաակտիվ մասնիկի՝ բացասական  $\mu^-$ -մեզոնի (մյուոն, կամ «ճանր էլեկտրոն») և նեյտրինոյի: Բացասական լիցքով մյուոնը իր հատկություններով մոտ է էլեկտրոնին, ունենալով 207 էլեկտրոնի զանգված, և կյանքի տևողության համեմատաբար մեծ արժեք, ոչ միջուկաակտիվ է: Անցնելով մթնոլորտով, նա իր էներգիան ծախսում է միայն օդի

ատոմների և մոլեկուլների իոնացման վրա, կրում է էներգիայի համեմատաբար քիչ կորուստներ ու կարողանում է հասնել Երկրի մակերևույթ և թափանցել նրա խորքերը:

Ինչպես ասվեց վերևում երկրորդային տիեզերական մասնիկները առաջանում են ծովի մակերևույթից 15 կմ բարձրության օդային շերտում (նկ. 1), և առաջացած նոր մասնիկները սկսում են շարժվել առաջնային մասնիկի շարժման ուղղությամբ՝ ներքև, և իրենց հերթին փոխազդում են օդի մոլեկուլների ատոմների միջուկների հետ, և եթե ունենում են բավականաչափ էներգիա, առաջացնում են փոխարկման նոր ռեակցիաներ, որոնց արդյունքում ծնվում են էլեկտրոն-պոզիտրոն զույգեր,  $\gamma$ -քվանտներ: Նկ. 1-ում մասնիկի  $X_0$ -ճանապարհը ամենակարճն է, երբ բևեռային  $\theta$ -անկյունը հավասար է զրոյի՝  $\theta = 0$ , իսկ զրոյից տարբեր  $\theta$ -անկյան տակ գնացող մասնիկի  $X$ - ճանապարհը  $1/\cos \theta$  անգամ մեծ է և նրա կլանման հավանականությունն էլ նույնպես մեծ կլինի: Արդյունքում ձևավորվում է երկրորդային տիեզերական ճառագայթների լայն հեղեղը, որի բաղադրությունում հանդիպում են ներկայումս հայտնի գրեթե բոլոր տարրական մասնիկները:



Նկ.1  $X_0$ -բարձրության օդային շերտում երկրորդային տիեզերական ճառագայթների առաջացումը, նրանց ճանապարհները մթնոլորտում: 1- առաջացման շերտ, 2-երկրի մակերևույթ,  $\theta$ -ն՝ բևեռային անկյուն:

Այսպիսով՝ Երկրի մթնոլորտը կարևոր դեր է կատարում առաջնային տիեզերական ճառագայթումները երկրորդային ճառագայթումների փոխարկելու գործում: Երկրի մակերևույթի մոտ նվազում է ոչ միայն առաջնային տիեզերական ճառագայթումների ուժգնությունը, այլև փոխվում է նրանց բնույթը: Օրինակ՝ ծովի մակերևույթին երկրորդային ճառագայթումների ուժգնությունը 100 անգամ քիչ է առաջնային տիեզերական ճառագայթումների ուժգնությունից, և գործնականում նրանց բաղադրությունում բացակայում են միջուկաակտիվ մասնիկները, քանի որ նրանց փոխարեն առաջացել են լեպտոններ՝ մյուոններ (կոշտ բաղադրիչ), էլեկտրոններ և գամմա քվանտներ՝ ոչ միջուկաակտիվ մասնիկներ:

Չափումները կատարվել են Երևան քաղաքում (ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա և օգտագործվել է գրանցող ՓՈՒԿ-01 տիեզերական հեռադիտակը): Մասնիկների անարգել մուտքը դեպի ՓՈՒԿ-01 տիեզերական հեռադիտակը ապահովելու համար այն տեղադրվել է ՀՊՄՀ գլխամասային շենքի տանիքում տեղակայված ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աստղադիտարանում:

Ուղղելով հեռադիտակի առանցքը հյուսիս-հարավ, ուղղությամբ առանձին-առանձին չափումների տվյալները մասնիկների թիվը միավոր ժամանակում տարբեր անկյունների դեպքում բերված են աղյուսակ 1-ում (դեպի հյուսիսային ուղղությամբ) և աղյուսակ 2-ում (դեպի հարավային ուղղությամբ), որտեղ բևեռային անկյան յուրաքանչյուր արժեքի դեպքում կատարվել են հինգական չափումներ և վերցվել են դրանց միջին արժեքը, որը բերված է վերջին սյունակում:


Աղյուսակ 1. Մյուտոնների թիվը միավոր ժամանակում հյուսիսային ուղղությամբ:

$\theta$	$N_1$	$N_2$	$N_3$	$N_4$	$N_5$	$N_{\text{մբ.}}$
$0^\circ$	10	22	6	19	17	14.8
$15^\circ$	15	16	10	13	15	13.8
$30^\circ$	7	6	11	15	19	11.6
$45^\circ$	7	6	8	6	5	6.4
$60^\circ$	7	5	6	2	4	4.8
$75^\circ$	1	2	3	3	2	2.2
$90^\circ$	0	2	1	0	0	0.6


Աղյուսակ 2. Մյուտոնների թիվը միավոր ժամանակում հարավային ուղղությամբ:

$\theta$	$N_1$	$N_2$	$N_3$	$N_4$	$N_5$	$N_{\text{մբ.}}$
$0^\circ$	10	22	6	19	17	14.8
$15^\circ$	15	16	10	13	14	13.6
$30^\circ$	5	6	11	14	15	10.2
$45^\circ$	9	7	8	8	6	7.6
$60^\circ$	5	4	3	3	4	3.8
$75^\circ$	1	2	2	3	1	1.8
$90^\circ$	0	1	1	0	0	0.4

Աղյուսակ



Նկ.2: Մյուտոնների թվի՝  $N$ -ի կախումը  $\theta$ -անկյունից պատկերող գրաֆիկը հյուսիսային ուղղությամբ



Նկ. 3: Մյուտոնների թվի՝  $N$ -ի կախումը  $\theta$ -անկյունից պատկերող գրաֆիկը հարավային ուղղությամբ




Հյուսիս-հարավ ուղղություններով կատարված չափումներում էական տարբերություններ չեն նկատվել, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն, որ տիեզերքը լցված է տիեզերական ճառագայթումներով և չկա ճառագայթումների միայնակ կետային աղբյուր՝ չհաշված արեգակնային ճառագայթումները: Այդ պատճառով հյուսիսային և հարավային ուղղություններում ստացված արժեքները միջինացվել են, որոնք բերված են աղյուսակ 3-ի առաջին տողում:

$\theta = 90^\circ$  բևեռային անկյան դեպքում չափվում է միայն միջավայրում առկա ֆոնային ճառագայթման ուժգնությունը, որը մեր չափումների համաձայն ունի  $\kappa = 0.5$  արժեք, որում բացակայում են մյուսները: Եվ քանի որ բոլոր անկյունների չափման դեպքում այդ ֆոնային ճառագայթման ուժգնությունը առկա է, ուստի՝  $\theta = 0^\circ$ -ից մինչև  $\theta = 75^\circ$  չափումների արժեքներից պետք է հանել  $\kappa = 0.5$  արժեքը: Այսինքն՝ աղյուսակ 3-ի երկրորդ տողի թվերից հանվում է 0.5 թիվը և գրվում երրորդ տողում:

Աղյուսակ 3. 1 և 2 աղյուսակների միջինացված արժեքները և մյուսների թիվը:

$\theta$	$0^\circ$	$15^\circ$	$30^\circ$	$45^\circ$	$60^\circ$	$75^\circ$	$90^\circ$
N	14.8	13.7	10.9	7	4.3	2	0.5
N- $\kappa$	14.3	13.2	10.4	6.5	3.8	1.5	0
x	0	2.3	2.25	2.2	1.9	1.7	0

Աղյուսակ 3-ի երրորդ տողի տվյալներով կառուցվել է մյուսների թվի՝  $N - k$  -ի կախումը  $\theta$ -անկյունից պատկերող գրաֆիկը (նկ. 4):



Նկ. 4: Մյուսների թվի՝  $(N-k)$  -ի կախումը  $\theta$ -անկյունից պատկերող գրաֆիկը առանց միջավայրի ֆոնային ճառագայթման ուժգնության:

Նկ. 4-ի գրաֆիկի կորի տեսքը հիշեցնում է կոսինուս ֆունկցիայի գրաֆիկը, սակայն ակնհայտ չէ նրա ցուցիչի մեծությունը, որը կարելի է ճշտել աղյուսակ 3-ի փորձի տվյալները օգտագործելով, այսինքն ստանալ ճշգրիտ տեսքով էմպիրիկ բանաձև հետևյալ ճանապարհով՝  
Կարող ենք գրել՝

$$N - k = (N - k)_0 \cos^x \theta, \quad (1)$$

որտեղ  $(N - k)_0$ -ն մյուսների առավելագույն արժեքն է երբ  $\theta = 0^\circ$ , որը համաձայն աղյուսակ 3-ի և նկ. 4-ի տվյալների հավասար է՝  $(N - k)_0 = 14,8$ :

Մեր խնդիրն է (1)-ից որոշել  $x$ -ցուցիչի թվային արժեքը:  
Դրա համար (1)-ից կգրենք՝

$$\frac{N - k}{(N - k)_0} = \cos^x \theta, \quad \text{կամ} \quad \ln \frac{N - k}{(N - k)_0} = x \ln \cos \theta \quad (2)$$

որտեղից՝

$$x = \frac{\ln \frac{N - k}{(N - k)_0}}{\ln \cos \theta} \quad (3)$$

Աղյուսակ 3-ի փորձնական տվյալներով  $\theta$ -ի արժեքներին համապատասխանող  $N - k$ -ի մեծություններից  $x$ -ի համար ստանում ենք արժեքներ, որոնք բերված են ստորև և ստացված արժեքները գրանցված են աղյուսակ 3-ի չորրորդ ստորում:

$$\theta = 15^\circ \Rightarrow x = 2,30$$

$$\theta = 30^\circ \Rightarrow x = 2,25$$

$$\theta = 45^\circ \Rightarrow x = 2,20$$

$$\theta = 60^\circ \Rightarrow x = 1,90$$

$$\theta = 75^\circ \Rightarrow x = 1,70$$

Վերը բերված  $x$ -ի արժեքներից, նրա միջին արժեքի համար ստանում ենք՝  
 $x = 2,07 \approx 2,0$

Այսպիսով՝ տիեզերական ճառագայթների ուժգնության համար (1)-էմպիրիկ բանաձևը բացահայտ և վերջնական տեսքով կգրենք՝

$$N - k = (N - k)_0 \cos^2 \theta, \quad (4)$$

կամ՝

$$I = I_0 \cos^2 \theta: \quad (5)$$

Համաձայն ստացված բանաձևի երկրորդային տիեզերական մասնիկների հոսքի ուժգնությունը փոխվում է ուղիղ համեմատական կոսինուսի քառակուսային աստիճանին, որը համընկնում է Երկրագնդի այլ վայրերում տարբեր եղանակներով չափված արդյունքների հետ: Սակայն այստեղ՝ մեր էքսպերիմենտի արդյունքների համար կա մի առանձնահատկություն այն, որ կոսինուսի ցուցիչի՝  $x$ -ի վերը բերված արժեքներում նկատվում է որոշակի օրինաչափություն՝  $\theta$ -ի արժեքի մեծացմանը զուգընթաց փոքրանում են  $x$ -ցուցիչի արժեքները: Այս օրինաչափությունը հատուկ մեկնաբանման կարիք ունի:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Мухин К.Н. <<ФИЗИКА Элементарных частиц >> том 2, Москва, Атомиздат 1984г.
2. Добротин Н.А. <<Космические лучей>> М., Изд. АН СССР, 1963г.
3. Мурзин В.С. <<Введение в физику космических лучей>> М., Изд. МГУ, 1988г.

4. Яворский Б.М., Детлаф А.А. <<Курс физики>> том 3, Москва 1971 г.
5. Широков Ю., Юдин П. <<Ядерная физика>> М., Наука 1980г.
6. Окунь Л. <<Элементарные частицы>> М., Мир, 1988г.
7. Соболев В.В. «Курс теоретической астрофизики» 2-ое изд.; М., 1972
8. Գ.Բ.Ժղանով <<Ճառագայթներ տիեզերքի խորքերից>> Երևան 1953թ. 156 էջ
9. Ռ.Ս.Սարանյան, Ա.Ս.Թարոյան <<Միջուկային ֆիզիկայի փորձարարական աշխատանքների ուսումնական ձեռնարկ>> Երևան 2014թ., 65 էջ

#### РЕЗЮМЕ

### ЭМПИРИЧЕСКАЯ ФОРМУЛА УГЛОВОГО РАСПРЕДЕЛЕНИЯ ИНТЕНСИВНОСТИ КОСМИЧЕСКИХ ЧАСТИЦ

*А.С.ТАРОЯН, А.Х.АСАТРЯН, Л.В.АВETИСЯН, Н.Н.МХИТАРЯН*

В работе выведена всеобщая эмпирическая формула углового распределения интенсивности космических частиц. Работы проводились г. Ереване с использованием космического телескопа ФПК-01 в обсерватории кафедры физики и методики преподавания физики АГПУ.

#### SUMMARY

### ON THE EMPIRICAL FORMULA OF THE ANGULAR DISTRIBUTION OF THE INTENSITY OF COSMIC PARTICLES

*A.S.TAROYAN, A.K.ASATRYAN, L.V.AVETISYAN, N.N.MKHITARYAN*

In this work it was determined the universal formula for the angular distribution of the intensity of cosmic particles for the geographical location of Yerevan city. It was used cosmic telescope «ФПК-01» on the observatory of the physics department of the ASPU.

ՀՏԴ 53.01

ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԿԻՍԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ  
ԿԱՆՎԱՍՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՐՈՇ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ  
**Ֆ. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ռ. Ս. ՄԱՔԱՆՅԱՆ**

**Խ. Արսլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,  
0010, Երևան, Տիգրան Մեծի 17  
e-mail: fkarapetyan@gmail.com**

Հետազոտվել է *Cu*-ի և *Ge*-ի դիմադրությունների կախումը ջերմաստիճանից: Պարզ փորձնական հետազոտության արդյունքներից որոշվել են մետաղների և կիսահաղորդիչների բավականին կարևոր հաստատուններ՝ դիմադրության ջերմաստիճանային գործակիցը, արգելված գոտու լայնությունը, տեսակարար դիմադրությունը, տեսակարար հաղորդականությունը, լիցքակիրների շարժունակությունը և կոնցենտրացիան: Դիմադրության ջերմաստիճանային կախվածության հետազոտությունները կատարվել են *Cu*-ի և *Ge*-ի համար  $20^{\circ}\text{C} - 120^{\circ}\text{C}$  ջերմաստիճանային տիրույթում: Որոշված պարամետրները օգտագործվում են կիսահաղորդիչների մաքրությունը գնահատելու համար, քանի որ խառնուրդի աննշան քանակը զգալի փոխում է լիցքակիրների կոնցենտրացիան և էլեկտրահաղորդականությունը:

**Բանալի բառեր** Կիսահաղորդիչներ, մետաղներ, դիմադրություն, ջերմաստիճան, դիէլեկտրիկներ, արգելված գոտու լայնություն, շարժունակություն:

**Ներկայացված է խմբագրություն 06.11.2016թ.**

Մետաղների և կիսահաղորդիչների էլեկտրահաղորդականության բնույթը հասկանալու համար խիստ կարևոր են նրանց այնպիսի պարամետրեր, ինչպիսին են արգելված գոտու լայնությունը, դիմադրության ջերմաստիճանային գործակիցը, տեսակարար հաղորդականությունը, լիցքակիրների շարժունակությունը:

Պինդ մարմինների էլեկտրահաղորդականության գոնային տեսությունը բացատրում է մետաղների և կիսահաղորդիչների հաղորդականության մեխանիզմը:

Հայտնի է, որ [1], քվանտային համակարգում էլեկտրոնների էներգիան չի կարող ընդունել ցանկացած արժեք, այլ միայն դիսկրետ արժեքներ, որոնց անվանում են թույլատրելի էներգիական մակարդակներ: Էլեկտրոնները ենթարկվում են Պաուլիի սկզբունքին. տվյալ քվանտային վիճակում կարող է գտնվել միայն մեկ էլեկտրոն: Սովորաբար մեկ էներգետիկ մակարդակում կարող են գտնվել երկու հակադրահեռ սպին ունեցող էլեկտրոններ: Երբ առանձին ատոմները փոխազդեցության ընթացքում իրար շատ են մոտենում յուրաքանչյուր էներգետիկ մակարդակ տրոհվում է իրար շատ մոտ մակարդակների, որոնք առաջացնում են էներգետիկ գոտիներ: Թույլատրելի գոտիները իրարից բաժանված են որոշ տիրույթով, որում էլեկտրոնները բացակայում են, որը անվանվել է արգելված գոտի: Արգելված գոտու լայնությամբ որոշվում է էլեկտրոնների կապի էներգիան ցանցի իոնների հետ: Կախված արգելված գոտու լայնությունից (ակտիվացման էներգիա) նյութերը բաժանվում են երեք խմբի՝ հաղորդիչներ, կիսահաղորդիչներ և մեկուսիչներ:


Մետաղներում արգելված գոտու լայնությունը կամ էլեկտրոնների ակտիվացման էներգիան  $\sim 10^{-2}$  էՎ կարգի է: Կիսահաղորդիչների մոտ վալենտական գոտին լրացված է ամբողջությամբ, իսկ արգելված գոտու լայնությունը չի գերազանցում 1 էՎ, մեկուսիչներինը մի քանի էլեկտրոնվոլտ է [2]: Որոշելով դիմադրության ջերմաստիճանային կախվածությունը բավականին պարզ փորձարարական եղանակով կարելի է հաշվել ակտիվացման էներգիան, ինչպես նաև վերը նշած մնացած բոլոր պարամետրերը: Էլեկտրոնին վալենտական գոտուց հաղորդականության գոտի տեղափոխելու համար ակտիվացման  $\Delta E$  էներգիան որոշվում (1)-ին հավասարումից [2]՝

$$\Delta E = 2k \frac{\Delta \ln R}{\Delta \left(\frac{1}{T}\right)} \quad (1)$$

Որտեղ  $k$ -ն Բոլցմանի հաստատունն է,  $R$ -ը դիմադրությունը տվյալ ջերմաստիճանում,  $T$ -ն բացարձակ ջերմաստիճանը:


Օգտվելով  $R(T) \approx \ln R \left(\frac{1}{T}\right)$  (նկ1) կախվածության գրաֆիկներից կարելի որոշել

$$K = \text{tg } \alpha = \frac{\Delta \ln R}{\Delta \left(\frac{1}{T}\right)} :$$




Նկ1. Կիսահաղորդիչների դիմադրության կախումը ջերմաստիճանից


Աշխատանքում ուսումնասիրվել են Cu-ի և Ge-ի դիմադրության ջերմաստիճանային կախումը  $20\text{C}^{\circ}$ -  $120\text{C}^{\circ}$  տիրույթում: Նկ.2 ա-ում բերված է փորձի տվյալների հիման վրա կառուցված պղնձի դիմադրության ջերմաստիճանից կախման գրաֆիկը, նկ.2 բ-ում նույն նմուշի  $\ln R$  -ի  $\left(\frac{1}{T}\right)$ -ից գրաֆիկը: Նկ.3 ա-ում և նկ.3 բ-ում բերված են գերմանիումի նմուշի համար փորձի արդյունքների հիման վրա կառուցված  $R(T)$  և  $\ln R \left(\frac{1}{T}\right)$  գրաֆիկները:




Նկ.2ա. Պղնձի դիմադրության կախումը ջերմաստիճանից



Նկ.2բ. Պղնձի  $\ln R$ -ի կախումը  $(\frac{1}{T})$ -ից



Նկ. 3 ա. Գերմանիումի դիմադրության կախումը ջերմաստիճանից



Նկ.3բ. Գերմանիումի  $\ln R$  -ի կախումը  $(\frac{1}{T})$ -ից

Ֆիքսված ջերմաստիճաններում պղնձի դիմադրության արժեքներից որոշվել է տվյալ ջերմաստիճանային տիրույթի համար փորձանմուշի դիմադրության ջերմաստիճանային գործակիցը հետևյալ բանաձևից.

$$\alpha = \frac{R_2 - R_1}{R_1 t_2 - R_2 t_1} = 4,4 \cdot 10^{-3} \text{ աստ}^{-1}:$$

Որոշելով  $K$  անկյունային գործակիցը, հաշվել ենք պղնձի էլեկտրոնների ակտիվացման էներգիան հետևյալ բանաձևով՝

$$E = 2kK = \frac{2 \cdot 1,38 \cdot 10^{-23} \cdot 0,25}{0,0006237} = 0,07 \text{ էՎ}:$$

Օգտվելով վերը հաշվարկած  $\alpha$ -ի արժեքից, տեսակարար դիմադրության  $\rho$ -ի համար ստացվել է՝

$$\rho = 1,7811 \cdot 10^{-8} \text{ Օհմ}\cdot\text{մ}:$$

Տեսակարար էլեկտրահաղորդականությունը որոշվել է հետևյալ արտահայտությունից՝

$$\sigma = \frac{1}{\rho} = 5,6145 \cdot 10^7 \text{ 1/Օհմ}\cdot\text{մ}$$

Լիցքակիրների կոնցենտրացիայի համար ստացվել է՝

$$n = \frac{\rho N_A}{\mu} = 8,5 \cdot 10^{28} \text{ մ}^{-3}:$$

Մետաղների համար ստացված արդյունքները տեղադրելով ստորև բերված բանաձևում [ 3 ], կստանանք պղնձի լիցքակիրների շարժունակությունը՝

$$u = \frac{\sigma}{en} = \frac{5,6145 \cdot 10^7}{1,6 \cdot 10^{-19} \cdot 8,5 \cdot 10^{28}} = 4,128 \cdot 10^{-3} \frac{\text{մ}^2}{\text{Վ}\cdot\text{վ}}$$

Պղնձի համար ստացված արդյունքները համապատասխանում են գրականության մեջ բերված արժեքներին [ 4 ]:

Տարբերում են սեփական և խարնուրդային հաղորդականությամբ կիսահաղորդիչներ: Սեփական հաղորդականությամբ կիսահաղորդիչների թվին են պատկանում Ge, Si, Se և այլն: Մեր կողմից հետազոտվող կեսահաղորդիչը Ge-ի մնուշն է:

Ինչպես գիտենք [2] կիսահաղորդիչների տեսակարար հաղորդականությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma = \sigma_0 e^{-\frac{\Delta E}{2kT}}$$

կամ  $R = R_0 e^{\frac{\Delta E}{2kT}},$

որտեղ  $\Delta E$ -են ակտիվացման էներգիան է,  $T$ -ն ջերմաստիճանն է,  $k$ -ն Բոլցմանի հաստատունը,  $R_0$ -ն նմուշի դիմադրությունն է  $0^\circ\text{C}$ -ում:

Կիսահաղորդիչների դիմադրության ջերմաստիճանային կախվածության գրաֆիկից (նկ.3բ) հաշվել ենք կիսահաղորդիչների համար  $K = \frac{\Delta \ln R}{\Delta(\frac{1}{T})}$ -ն: 1-ին բանաձևով որոշվել է գերմանիումի ակտիվացման էներգիան՝

$$\Delta E = 2kK = 2k \frac{(\ln R)_{վերջ} - (\ln R)_{սկզբ}}{(\frac{1}{T})_{վերջ} - (\frac{1}{T})_{սկզբ}} = 0,6 \text{ էՎ}:$$

Գերմանիումի դիմադրության ջերմաստիճանային գործակիցը  $\alpha = \frac{1 \cdot 40,5}{45,2 \cdot 67} = 0,013 \text{ աստ}^{-1}$ :

Գերմանիումի տեսակարար էլեկտրահաղորդականությունը որոշվել է հետևյալ արտահայտությունից՝

$$\sigma = \frac{1}{\rho} = 5,6145 \cdot 10^7 \text{ 1/Օհմ}\cdot\text{մ}:$$

Լիցքակիրների շարժունակությունը որոշվել է  $u = \sigma R_H$  [2] արտահայտությունից, որտեղ  $R_H$  -ը Հոլի հաստատունն է գերմանիումի համար՝

$$u = \sigma R_H = 58,8 \cdot 6,3 \cdot 10^{-3} = 0,37 \frac{\text{մ}^2}{\text{վ}}$$

Ստացված արդյունքների հիման վրա արվել է հետևյալ եզրակացությունները՝

1. Դիմադրության ջերմաստիճանային կախվածության բավականաչափ պարզ փորձարարական ուստիմնասիրության միջոցով ( $20^\circ\text{C} - 120^\circ\text{C}$  ջերմաստիճանային տիրույթում) կարելի է որոշել էլեկտրահաղորդականության մեխանիզմները պարզաբանող այնպիսի կարևոր պարամետրեր ինչպիսիքն են տեսակարար դիմադրությունը, և շարժունակությունը, արգելված գոտու լայնությունը (լիցքակիրների ակտիվացիայի էներգիան), դիմադրության ջերմաստիճանային գործակիցը տեսակարար հաղորդականությունը, լիցքակիրների կոնցենտրացիան:

2. Ուսումնասիրությունից ստացված տվյալներից երևում է, որ մետաղների և կիսահաղորդիչների լիցքակիրների արգելված գոտու լայնությունները էապես տարբերվում են իրարից, մետաղների  $R(T)$  կախումը տվյալ ջերմաստիճանային տիրույթում գծային է, իսկ կիսահաղորդիչների մոտ նվազում է  $R = R_0 e^{\frac{\Delta E}{2kT}}$  օրենքով: Փորձից ստացված արդյունքները համապատասխանում են գրականության [4] մեջ բերված տվյալներին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. У. В. Савельев, Курс общей физики, т.3 ,Москва, 2001, с. 368.
2. В. В. Андреев, А. А. Балмашов, В. И. Корольков, О. Т. Лоза, В. П. Милантьев, Физическая электроника и ее современные применения, Учебное пособие, Москва, 2008, с.80-104.
3. В. Л. Бонч-Бруевич, С. Г. Калашников, Физика полупроводников, Москва, Наука, 1990, с.14, с.41.
4. И.С. Григорьев, Е.З.Михайлов Физические величины. Справочник , Москва ,1991г.



**РЕЗЮМЕ**  
**ОПРЕДЕЛЕНИЕ НЕКОТОРЫХ ФИЗИЧЕСКИХ ХАРАКТЕРИСТИК МЕТАЛЛОВ И**  
**ПОЛУПРОВОДНИКОВ ИСХОДЯ ИЗ ТЕМПЕРАТУРНОЙ ЗАВИСИМОСТИ**  
**СОПРОТИВЛЕНИЯ**  
*Ф.С. КАРАПЕТЯН, Р.С. САКАНЯН*

В работе исследована зависимость сопротивления металлов и полупроводников от температуры. На основании предложенного простого метода исследования температурной зависимости сопротивления были определены следующие важные параметры металлов и полупроводников: ширина запрещенной зоны, удельная проводимость, удельное сопротивление, температурный коэффициент сопротивления, подвижность и концентрация заряженных частиц. Исследования температурной зависимости сопротивления для *Cu* и *Ge* были осуществлены в интервале температур 20°C- 120°C. Некоторые из этих параметров используются для оценки чистоты полупроводников, так как незначительное количество примеси заметно меняют концентрацию заряженных частиц и электропроводность.

**SUMMARY**  
**DETERMINATION OF SEVERAL PHYSICAL CHARACTERISTICS OF METALS AND**  
**SEMICONDUCTORS BASED ON THE DEPENDENCE OF RESISTANCE ON TEMPERATURE**  
*F.S.KARAPETYAN, R.S.SAKANYAN*

The study analyses the dependence of the resistance of metals and semiconductors on temperature. Based on the experimental results of temperature dependence on resistivity the following important parameters of metals and semiconductors have been identified: the width of the forbidden zone, specific electrical conductivity, specific resistivity, temperature coefficient of resistance, mobility and concentration of charged particles. The study of temperature dependence on resistance for *Cu* and *Ge* were carried out in the temperature range 20°C - 120°C. Some of the identified parameters are used to assess the purity of semiconductors, as even a very small change in consistency significantly change the concentration of charged particles and their electrical conductivity.

УДК 539.3/6

ПРЕДЕЛЬНЫЕ АМПЛИТУДЫ СИЛЬНЫХ ЗВУКОВЫХ ВОЛН В ТОНКИХ  
ПОЛУПРОВОДНИКОВЫХ ПЛЕНКАХ  
АРАКЕЛЯН М.М., ПЕТРОСЯН А.М.

*Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна,  
010, Ереван, пр. Тигран Меци 17  
e-mail.marakelyan@ysu.am*

*В сильных звуковых полях в квантованных полупроводниковых пленках найдены дополнительные по сравнению с массивным образцом ограничения на величину предельных значений амплитуд внешних воздействий, зависящие от параметров пленки и упругого поля.*

*Ключевые слова: упругие волны, тонкие пленки, напряжения, деформации, прочность.*

*Поступило в редакцию 12.10.2016г.*

Прочность – свойство материала, характеризующее его способность сопротивляться необратимому деформированию под действием внешней нагрузки. Предел прочности – напряжение или деформация, соответствующие максимальному (в момент разрушения материала) значению нагрузки. Предел прочности – основная характеристика механических свойств материалов, которые разрушаются при малых пластических деформациях.

Наиболее широко применяемыми полупроводниками являются германий и кремний. Германий используется для изготовления выпрямителей, транзисторов, фотодиодов, линз для инфракрасных лучей и т.д. Нелегированный кремний применяют при создании мощных силовых выпрямителей, стабилизаторов напряжений, солнечных батарей, структур, состоящих из чередующихся полупроводниковых слоев и других приборов.

В полупроводниковых приборах, работающих при повышенных токовых и тепловых нагрузках, в материале возбуждается звук, взаимодействующий с упругой средой. Возбуждающиеся сильные звуковые волны оказывают влияние на прочность полупроводниковых пластин. Под действием сильных звуковых волн в тонких полупроводниковых пленках могут возникать напряжения и деформации, превышающие допустимые пределы для данного материала и толщины пленки.

В последнее время в связи с миниатюризацией классических микроэлектронных приборов возрос интерес к пленочным системам. Поэтому при создании новых полупроводниковых приборов актуальным является расчет тонких пленок на прочность при взаимодействии с сильными звуковыми волнами.

Под действием сильных звуковых волн в тонких полупроводниковых пленках могут возникать напряжения и деформации, превышающие допустимые пределы для данного материала и толщины пленки.

Характер колебаний в пленке существенно отличается от колебаний в массивных образцах. Имеется тонкая полупроводниковая пленка толщиной  $2l$ , ось  $Z$  направлена

перпендикулярно плоскости пленки. Истинный вектор деформации в упругой волне в этом случае является суммой поперечной и продольной составляющей волн, компоненты каждой из составляющих удовлетворяют волновым уравнениям с соответствующими значениями скоростей. (В случае объемных волн в неограниченной среде эти две составляющие представляют собой независимо распространяющиеся волны). Рассмотрим продольные и поперечные волны, смещения  $\vec{u}$  в которых лежат в вертикальной плоскости, проходящей через волновой вектор. Проводимый расчет ограничен областью температур  $T < \theta/n$ , где  $\theta$  – температура Дебая,  $n$  – число атомных слоев в пленке [1].

1. Ներկայումս տարածված են ծառերի (ծառայի) վիճակի բալային գնահատականներ, որոնք իրենցից ներկայացնում են ինտերվալային արժեքներ՝ 0-4, 1-4, 1-5 1-6 բալ: Օրինակ, սանիտարական նորմերի համաձայն՝ առողջ ծառերը գնահատում են 1 բալ, թուլացվածները՝ 2 բալ, խիստ թուլացվածները՝ 3 բալ, մեռնողները՝ 4 բալ, թարմ ցցաչորերը՝ 5 բալ, հին ցցաչորերը՝ 6 բալ, իսկ ծառայի ինդեքսները հետևյալն են. առողջինը՝ 1.0-1.5 բալ; թուլացածինը՝ 1.6-2.5 բալ; խիստ թուլացածինը՝ 2.6-3.5 բալ; չորացողինը՝ 3.6-4.5 բալ, իսկ ցցաչորինը՝ 4.6 բալ [2]:

Արդյունաբերական և հետազոտական նպատակների համար բավարար է գնահատել ծառերի կենսավիճակը հարաբերական միավորներով, որոնց կատեգորիաները թվարկված են վերը նշված սանդղակում: Խիստ վնասված (խիստ թուլացած) ծառերի կենսունակությունը նվազել է մոտավորապես 70%-ով: Այն դեպքում, երբ դրանց նորմալ վիճակի գնահատում կատարվում է, կենսունակության մոտավոր 40%-ի պահպանման պայմաններում:

Չորացող ծառի կենսական հնարավորությունները հազվադեպ գերազանցում են հնարավորի 5%-ը:

Ծառայի կենսունակության որոշումը իրականացվում է հետևյալ հայտնի բանաձևով՝

$$L_v = \frac{100v_1 + 70v_2 + 40v_3 + 5v_4}{V} \quad [2]$$

որտեղ  $L_v$ -ն ծառայի հարաբերական կենսավիճակն է, որը հաշվարկված է հաշվի առնելով ծառերի խոշորությունը;  $v_1$ -ը փորձարարական տարածությունում կամ 1 հա անտառագոյացնող առողջ ծառատեսակների փայտանյութի կամ ծառայի ծավալն է ( $m^3$ );  $v_2, v_3, v_4$ -ը համապատասխանում են վնասված (թուլացած), խիստ վնասված և մեռնող ծառերի քանակին համապատասխանաբար; 100, 70, 40 և 5՝ գործակիցներ են, որոնք արտահայտում են առողջ, վնասված, խիստ վնասված և մեռնող ծառերի կենսավիճակը տոկոսներով (%),  $V$ -ն՝ մեկ հեկտար կամ փորձարարական տարածության ծառայում փայտանյութի ընդհանուր պաշարն է ( $m^3$ )՝ ներառած նաև ցցաչոր (կանգաչոր) ծառերը:

$L_v$ -ի 100-80% ցուցանիշի դեպքում ծառայի կենսավիճակը գնահատվում է «առողջ», 79-50-ի դեպքում ծառայը համարվում է վնասված (թուլացած), 49-20%-ի

դեպքում՝ խիստ վնասված (խիստ թուլացած), 19% և ավելի ցածր ցուցանիշի դեպքում՝ ամբողջովին ավերված [2]:

Մեր կողմից կատարած փորձարական հաշվարկների արդյունքում 1 հատարածությունում, ստացվել են՝ թվով 16 հատ առողջ, 2 հատ թույլ վնասված, 3 հատ խիստ վնասված և 2 հատ մեռնող ծառեր: Ծառայթի կենսունակությունը, որոշվել է վերը նշված բանաձևով:

Հաշվարկների արդյունքում Lv-ի ցուցանիշը հավասար է 81%-ի: Այսինքն ըստ ծառերի կենսավիճակի կատեգորիաների սանդղակի նշված տարածության ծառայթի հարաբերական կենսավիճակը գնահատում է «առողջ»:

$$L_v = \frac{100\% \cdot 16 + 70\% \cdot 2 + 40\% \cdot 3 + 5\% \cdot 2}{100} = 81\%$$

23

Ըստ ծառերի քանակության ծառայթների կենսականության հաշվարկները ավելի պարզ և արագ են, քան ըստ փայտանյութի ծավալի, բայց ավելի քիչ ճշգրտություն ունեն, քանի որ ենթադրում են տարբեր դասի և խոշորության ծառերի միևնույն նշանակություն: Իրականում այն կտրուկ տարբեր է: Հավանական է, որ ծառայթի կենսականության գնահատման համար առավել ճիշտ կլինեն հաշվի առնել կենսավիճակի տարբեր կատեգորիաներ ունեցող առանձնյակների ֆիտոզանգվածների մեծությունները, սակայն ներկայումս դա ոչ միշտ է հնարավոր տվյալների անբավարարության պատճառով: Ինչպես նաև մեթոդական կարևորագույն խնդիրներից է՝ ծառայթների կենսավիճակի գնահատմանը ցցաչորերի ներգրավումը: Խնամքի և սանիտարական հատման չենթարկվող անտառներում ծառերի աճի և դիֆերենցիացիայի ժամանակ անցում են թուլացած հատվածներ, այնուհետև կարող է տեղի ունենալ մեծ քանակությամբ ծառերի վնասում, որոնք կազմում են ծառայթի զգալի մասը:

Ստորև ներկայացված գործնական առաջակությունների, գործողությունների և միջոցառումների կիրառմամբ հնարավոր կլինի առավելի արագ և ավելի մեծ ճշգրտությամբ որոշել ծառայթների կենսունակությունը:

Ծառայթների կենսականության հաշվարկները, ըստ ծառերի քանակության, ավելի պարզ են և արագ, քան ըստ փայտանյութի ծավալի, սակայն ավելի քիչ ճշգրտություն ունեն: Ցավոք ներկայումս ծառայթների կենսականության հաշվարկները իրականացնել ոչ միշտ է հնարավոր, ուստի այդ կապակցությամբ առաջարկում ենք փորձագիտական ոլորտում հաշվարկների համար կիրառել ծառերի բների ծավալային ցուցանիշները որոշման եղանակը, քանի որ նշված մեթոդով տվյալների մշակումը որևէ բարդություն չի առաջացնում: Սակայն առանձին խնդիրների լուծման համար, օրինակ՝ ծառուղիների վիճակի որոշման պարագայում, հաշվարկը նպատակահարմար է իրականացնել ծառերի քանակությամբ:

Ծառայթների կենսավիճակի գնահատմանը ցցաչորերի ներգրավումը համարվում է մեթոդական խնդիր, ինչը բացատրվում է նրանով, որ խնամքի և սանիտարական հատման չենթարկվող անտառներում ծառերի աճի և դիֆերենցիացիայի ժամանակ առաջանում են թուլացած հատվածներ, այնուհետև կարող է տեղի ունենալ ծառայթի զգալի մասը կազմող մեծ քանակությամբ ծառերի վնասում: Բայց անտառում ցցաչորերի առկայությունը բնական և օրինաչափ երևույթ է՝ նորմալ և առողջ ծառայթներին բնորոշ, ուստի անտառի սանիտարական վիճակի գնահատման համար մահացած ծառերի հաշվարկը կարևորագույն նշանակություն ունի, քանի որ վերջիններիս գնահատումը հրդեհային և սանիտարական վտանգների ժամանակ ունեն մեծ նշանակություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ժ.Հ. Վարդանյան «Օտարափոխություն» Երևան 2005 էջ 34-46
2. Демаков Ю.П., Калинин К.К. Лесоводство. «Ведение хозяйства в лесах пораженных пожарами». Учеб. пособие. Йошкар – Ола 2003. с.135
3. Алексеев В.А.« Особенности описания древостоев и условиях атмосферного загрязнения. Взаимодействие лесных экосистем и атмосферных загрязнителей » 1982 с. 97-116.
4. Цветков И.В. Еловые леса в условиях техногенного стресса.// Окружающая природная среда и экологическое образование и воспитание. Всероссийская научно-практич. конф. Пенза. 2001. с. 85-89

## РЕЗЮМЕ

### ОТНОСИТЕЛЬНАЯ ОЦЕНКА ЖИЗНЕННОГО СОСТОЯНИЯ ДРЕВОСТОЕВ.

*В. С. СААКЯН*

В статье представлено определение относительной жизнеспособности деревьев. Для оценки жизнеспособности деревьев широко используется шкала категорий для обработанных деревьев. Разработка стратегии менеджмента лесных хозяйств, постоянное слежение и осуществление экспертной экологической оценки часто приводит к выявлению проблемы оценки жизнеспособности деревьев, составляющих лесную экосистему. В изучаемой нами территории с деревьями размером в 1 га, было осуществлено вычисление жизнеспособности деревьев, в результате чего уровень жизнеспособности данной территории был оценен как здоровый.

## SUMMARY

### THE RELATIVE DEFINITION OF VIABILITY OF TREES.

*V. S. SAHAKYAN*

The article presents the determination of the relative vitality of the trees. In order to assess the viability of the trees is widely used a range of categories for the treated trees, developed by professionals. Development of forestry management strategy, the constant pursuit and the implementation of an expert environmental assessment frequently leads to the identification of the problem of assessing the viability of the trees that constitute the forest ecosystem. In our study area with trees in size of 1 hectare, has been carried out the calculation of the viability of the trees, causing the level of the viability of this area has been rated as healthy.

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Բնական գիտություններ №1 (30) 2017 Естественные науки

ՀՏԴ 343.98

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ  
ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՆՉՈՂ ԽՈՍՔԻ ԼՍՈՂԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ  
Ս. Գ. ՊԱՊԻԿՅԱՆ

*«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Երևան, Բաակովի 24  
e-mail: suzannapapikyan@mail.ru*

*Դատական փորձագիտության բնագավառում կիրառվող ձայնագրություններում ձայնի և հնչող խոսքի լսողական հետազոտության մեթոդների օգնությամբ նույնականացման հատկանիշների (խոսքի տեմպ, մեղեդայնություն, առոգանություն, տեմբր, խոսքային շնչառություն և այլն) բացահայտումը հնարավորություն է տալիս փորձագետին որոշել՝ արդյոք հետազոտելի բանավոր նյութում խոսում են միևնույն, թե տարբեր անձինք:*

**Բանալի բառեր.** լսողական հետազոտություն, ձայնի ֆիզիկական բնութագրիչ, հնչող խոսք, մեղեդայնություն, առոգանություն, տեմբր, տեմպ, ձայնի դադար, հնչաշղթա:

**Ներկայացված է խմբագրություն 30.09.2016թ.**

Դատական փորձագիտության ոլորտում անձի նույնականացման հետազոտության մեջ իր ուրույն դերն ունի ձայնագրառումների լսողական մասի հետազոտությունը: Ձայնագրառումների լսողական մասը նպատակ ունի հետազոտելի նյութի լսողական վերլուծության օնությամբ բացահայտել այն նույնականացման հատկանիշները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել՝ արդյոք հետազոտելի բանավոր նյութում խոսում են միևնույն, թե տարբեր անձինք: Լսողական հետազոտությունն ուղղված է ձայնագրառման միջոցով ամրագրված բանավոր խոսքի հետազոտությամբ խոսողին նույնացնելուն, որն իրականացվում է հենց հնչյունաբանական, ձայնաբանական հետազոտության միջոցով [1]:

Բանավոր խոսքը կարող է տարանջատվել մի քանի տարրերի՝ խոսքային հոսք-արտահայտություն-բառ-հնչյուն: Խոսող անձի անհատականության վերաբերյալ տեղեկատվություն պահպանվում է այս տարրերից յուրաքանչյուրում, այդ պատճառով դատական նույնականացման հետազոտությունն իր մեջ պարունակում է խոսքի այդ տարրերից յուրաքանչյուրի վերլուծություն:

Հնչող խոսքի լսողական հետազոտությունը հիմնականում հիմնվում է խոսքային հոսքի հիման վրա: Հենց անընդհատ խոսքի վերլուծությունն է թույլ տալիս առանձնացնել այն հատկանիշները, որոնց մեծ մասը վերաբերում են ընդհանուր նույնականացման հատկանիշներին: Արտասանական հատկանիշները բնութագրում են խոսքը համակարգող օրգանների հմտությունների առանձնահատկությունները: Մարդու խոսակցական ապարատի ճիշտ աշխատանքից է կախված խոսքի արտասանության բնութագիրը, որն էլ իր հերթին ազդում է առանձին հնչյունների արտասանության վրա:

Հնչող խոսքի հետազոտության լսողական մասի նպատակը նույնականացման հատկանիշների բացահայտումն է ձայնի և հնչող խոսքի լսողական վերլուծության մեթոդների օգնությամբ: Լսողական վերլուծության անցկացման համար օգտագործվում են

տարբեր տեսակի ձայնային փոխարկիչներ, ինչպես նաև սարքեր՝ նախատեսված ձայնագրության միացման, ձայնային ազդանշանների ուժեղացման և զտման համար [2]:

Պայմանականորեն հատկանիշները կարելի է բաժանել 3 մեծ խմբի:

1. Ընդհանուր լսողական տպավորությունը բնութագրող հատկանիշներ.

- Ձայնի լսողական ընկալում, այսինքն խոսքային ազդանշանի լսողական որակի գնահատում՝ բարձր/ցածր, խուլ/հնչեղ, ուժեղ/թույլ, կոշտ/նուրբ, հաճելի/տհաճ, խոպոտ/ոչ խոպոտ, թույլ/հզոր, ազատ/կաշկանդված, հստակ/հեղհեղուկ, ձանձրալի/հետաքրքիր, լուրջ/թեթևամիտ և այլն:

- Խոսքի լսողական ընկալում, այսինքն շփման, հաղորդակցման առանձնահատկությունները, այսինքն՝ անստիպողականություն, հարկադրություն, հուզականություն, արտահայտչականություն, արհեստականություն (ձևականություն), բնականություն, զսպվածություն և այլն,

- Առողջանության ընդհանուր բնութագիր (արտաբերական հնչյունաբանության ընդհանուր բնութագիր)՝ հստակ/լողացող, կոճկված/բացահայտ, բնական/անբնական, վստահ/անվստահ, կանոնավոր/անկանոն և այլն,

- Տեմբրի (հնչերանգ) ընդհանուր բնութագիր (այսինքն՝ խոսքային տրակտի ընդհանուր գնահատում)՝ տղամարդկային/կանացի, թույլ/հզոր, ինքնատիպ/ոչ ինքնատիպ, պողպատյա/թավշյա, արհեստական/բնական, խոպոտ/հնչեղ և այլն:

2. Խոսքային գործընթացի կազմակերպման հմտությունները բնութագրող հատկանիշներ՝

- Բարձրություն՝ բարձրության ընդհանուր մակարդակ (բարձր/ցածր, ուժեղ/թույլ, չափազանց բարձր ձայն), բարձրության փոփոխման դիապազոն (մեծ/միջին/փոքր), կայունություն (բարձրության փոփոխականություն, բարձրության դինամիկա՝ տարբեր խոսքային մակարդակների շրջանակներում՝ տեքստ, պարբերություն, բառակապակցություն/ոլիթմիկ խումբ/հնչյունական բառ/վանկ/հնչյուն)

- Խոսքի տեմպ, խոսքի կայունություն.

անհատական տեմպ (խոսքի արագություն), կայունություն.

- Խոսքային շնչառության յուրահատկություն, որը նախադասության հուզափմաստային մասերի կազմում տարբեր քանակությամբ բառեր տարբերելու ունակություն/չունակությունն է:

Խոսքային շնչառության նորմատիվություն, խոսքային շնչառության կայունություն, շնչառության և ֆոնային համակարգման խախտում, ձայնին տիրապետելու անհնարիություն, դրա հնչման ուժեղացում կամ թուլացում:

Խոսելով խոսքային շնչառության մասին խոսքի շնչառությունը նկարագրելիս փորձագետները շատ դեպքերում սահմանափակվում են բավարար հատկանիշներով՝ համաչափ, հանգիստ, խոսքային շնչառությանը տիրապետել կարողանալ/չկարողանալ, այսչինքն՝ շունչ վերցնել նախադասության սկզբում և մեջտեղում (եթե անհրաժեշտ է): Այդպիսի ունակությունը հնարավորություն է տալիս արտահայտման հուզափմաստային մասում ներառել ավելի, քան երկու-երեք բառ: Ընդհակառակը, խոսքային շնչառությանը չտիրապետելու ունակության դեպքում խոսողը նախադասության մեջ առանձնացնում է գրեթե ամեն մի բառը: Խոսքային շնչառությանը տիրապետելը հաճախ վերականգնվում է գործնականում, ինչպես այն մարդու հմտությունը, ով հաճախ է ելույթ ունենում լսարանի առջև, հավաքույթներում, ժողովներում և այլն: Խոսքային շնչառության տատանումներ հնարավոր են նաև խոսքի ընթացքում, ինչը կարող է խոսողի հուզական վիճակի հետևանք լինել: Խոսքային շնչառությանը տիրապետելը հաճախ համադրվում է ամբողջ նախադասության ընթացքում հիմնական տոնը պահելու ունակության հետ: Հակառակ դեպքում գոյանում են ձայնային ազատ բացատներ, նախադասության վերջի թուլացում: Եթե ձայնային բացատների գոյացումը կրում է կանոնավոր բնույթ, ապա այդ



առանձնահատկությունը կարող է դառնալ նույնականացման հատկանիշ, որը կարելի է ձևակերպել այսպես. խոսքի անհասկանալիության անբավարարություն նախադասության վերջում և մեջտեղում՝ հիմնական տոնի և հնչյունների արտասանության թուլացման արդյունքում:

Բառի սեղմումը, սեղմման տեսակները, սեղմման հաճախականությունը խոսքի անընթեռնելիության անկախ հատկանիշներ են:

Խոսքային շնչառությանը տիրապետելը և դրա հետ կապված՝ արտասանության հստակությունը, նախադասության ընթացքում հիմնական տոնը պահելու ունակությունը, այդ բոլոր բաղադրիչները ընդհանրացվում են մեկ բառով՝ «առողջանություն»: Սակայն հետազոտության լսողական մասում հաճախ անհրաժեշտ է լինում ավելի մանրամասն քննարկել այդ հասկացության բաղադրիչ մասերը:

- Մեղեդայնություն՝ մեղեդային միջակայք, գործածվող մեղեդային եզրագծերի համապատասխանությունը արտահայտման տեսակին (չավարտված/ավարտուն պարբերությո, պատմողականություն, դրդապատճառ, ընդհանուր հարց, հատուկ հարց, բացականչություն), տոնի անբավարար իջեցում իմաստային շեշտված ձայնավորի վրա՝ ավարտուն հնչաշղթայում, հավասար մեղեդային պատկեր անավարտ հնչաշղթայում, բարձրածո/իջնոդ մեղեդայնություն իմաստային շեշտված ձայնավորում անավարտ հնչաշղթայում, մարող տոն ավարտուն սինտագմայում, իմաստային շեշտված բառին նախորդող բառի վրա տոնի լրացուցիչ բարձրացում, երկու ինտոնացիոն կենտրոն մեկ ընդհանուր հարցում, աստիճանաբար մարող մեղեդային պատկեր հատուկ հարցում, բառի մեջ վանկերի հավասարաչափ տևողություն, իմաստային շեշտված բառի կտրուկ արտահայտվածություն՝ շեշտված վանկի ինտենսիվության կտրուկ մեծացման հաշվին, սինտագմաների բառ առ բառ արտասանություն՝ բառային շեշտի ուժեղացմամբ [3]:

3. Խոսողի անհատականությունը բնութագրող գործոններ.

- Անհատական հատկանիշներ՝ տարիք, սեռ, խոսքային շնչառություն, հուզական վիճակ, ֆիզիկական վիճակ, օրգանական պաթոլոգիաների առկայություն, մայրենի լեզու, իդիոլեկտ (տվյալ անձին բնորոշ տիպիկ, անհատական խոսքի արտահայտման միջոցների հավաքածու), արտահայտման ոճ, շեշտի առկայություն, բարբառի առկայություն, ազգային-տարածքային պատկանելիություն, հոգեբանական գծեր, մշակութային կարգավիճակ, սոցիալական կարգավիճակ, մասնագիտական պատկանելիություն, խոսքի նորմատիվություն և այլն,

- Խոսող անձի անատոմիական և ֆիզիկական բնութագրիչներ՝ խոսքային ապարատի առանձնահատկության կամ պաթոլոգիայի առկայություն, ատամնային պրոթեզների առկայություն, օտար մարմինների առկայություն բերանում, խոսողի ֆիզիկական վիճակ (հոգնածություն, խոսելու ընթացքում որևէ ֆիզիկական ծանրաբեռնվածություն, խոսելու ընթացքում անհարմար դիրք),

ֆիզիոլոգիական վիճակի յուրահատկություններ, ընդհանուր բնույթի հիվանդությունների առկայություն, շնչառական օրգանների հիվանդությունների առկայություն և այլն,

փոփոխված գիտակցության վիճակի առկայություն, ակոհոլի օգտագործում, թմրադեղերի և այլ հոգեմետ նյութերի ազդեցություն, բժշկական միջոցների ազդեցություն, հանգստացնող միջոցների առկայություն և այլ:

Խոսողի հուզական վիճակը (նորմայից շեղումները, էմոցիաների առկայությունը),

էմոցիաների տեսակները՝ անհանգստություն, ուրախություն, զարմանք, վիշտ, զայրույթ, զգվանք, աստելություն, վախ, ամոթ, մեղքի զգացողություն, էմոցիաների ազդեցության աստիճանը խոսքային ազդանշանի վրա՝ ուժեղ, միջին, թույլ:

Վերը բերված ցանկը չի արտահայտում լսողական խմբի նույնականացման հատկանիշների ցանկն ամբողջությամբ և կարող է ընդլայնվել այնպիսի բնութագրիչների հաշվին, ինչպիսիք են.

- Ձայնի դադարի ընդհանուր գնահատականը: Արտասանվածքի հատույթավորման մեջ մեծ է հատկապես դադարի դերը: Նրա անհրաժեշտությունը բխում է հնչաշղթան ըստ իմաստների հատույթավորման պահանջից,

խոսքի և դադարի հարաբերակցությունը տրամադրված խոսքային նյութում, դադարների գործածման յուրահատկությունը,

դադարի ընդհանուր գնահատում խոսքի տարրերի ձևակերպման դեպքում՝ երկարացումներով լրացված դադարի առկայություն, բառ-մոլախոտերով լրացված դադարի առկայություն, չլրացված դադարների առկայություն, տատանումներ հնչաշղթայի մեջ տեղում, տատանումներ նախադասության սկզբում, դադար-թրթռումների լրացման բնութագիր, դրանց դրսևորման տեղերը,

դադարի ընդհանուր գնահատում խոսքային տարրերի բաժանման դեպքում՝ արտահայտության հատվածային բաժանման յուրահատկությունները և դադարների կարգավորումը, անբավարար տևողությամբ դադարներ նախադասության վերջում, դադարի բացակայություն պարզ նախադասության վերջում, չափից երկար դադար պարզ նախադասության վերջում, չափից երկար դադար պարզ հնչաշղթայի դեպքում,

դադարի ընդհանուր գնահատում խոսքային տարրերի տեղաբաշխման դեպքում՝ դադարների գործածման կարգավորում խոսքի տարրերի տարբերակման համար, դադարների գործածման կայունություն խոսքի տարրերի տարբերակման համար, տարբերակվող խոսքային տարրերի բնութագիրը (նշանակալի բառեր),

- Շեշտի գործածման առանձնահատկությունը: Սովորաբար շեշտավոր վանկն արտասանվում է ավելի մեծ ուժգնությամբ, ուժգնության շեշտն արտահայտվում է օդի հոսանքի առավել ուժեղ արտամղումով, շեշտավոր վանկը ձայնաբանորեն տարբերակվում է ձայնի բարձրությամբ, ֆիզիոլոգիական տեսակետից մկանային լարվածության և արտաշնչման ուժեղությամբ: Չանագան շեշտերի տեղակայման յուրահատկությունները՝ արտաբերման տրամաբանական կենտրոնի տեղափոխում մասնիկների և նախդիրների, հնչաշղթայի բառ առ բառ արտասանություն՝ բառային շեշտի ուժեղացմամբ, բառային ճիշտ շեշտադրում, շեշտ (բառային) ժխտողական հատվածում և դադար դրանից հետո, իմաստային շեշտված վանկի առանձնացում ձայնավորի երկար հնչելու հաշվին,

- խոսքի տեմպի յուրահատկությունները. անհատական տեմպ, խոսքի արագությունը վանկերում/վայրկյաններով (արագ/դանդաղ/միջին), խոսքի տեմպի կայունություն/անկայունություն (կայուն/տատանվող, հավասար/փոփոխական, անհարթ/սահուն), տեմպի դանդաղեցում և առանց դիապազոնի կծկման բացատրական և լրացուցիչ կառույցների արտաբերում, արտահայտության ժամանակավոր կառուցվածքի խախտում՝ հնչաշղթայի կամ դրա մասերի ավելի արագ արտաբերման հաշվին,

- մեղեդայնություն. տոնի ոչ բավարար իջեցում հնչաշղթայի վերջում իմաստային շեշտված ձայնավորի վրա, աճող/նվազող մեղեդայնություն հնչաշղթայի իմաստային շեշտված ձայնավորում՝ ավարտուն հնչաշղթայում, մեղեդային համաչափ պատկեր ոչ եզրափակիչ հնչաշղթայում, նվազող տոն ոչ ավարտուն հնչաշղթայում, բառի վրա լրացուցիչ տոնի բարձրացում, որը նախորդում է հնչաշղթայի շեշտված բառին, անավարտ հնչաշղթաների բարձր տոնային սկիզբ, որը երբեմն ուղեկցվում է առաջին շեշտված վանկի ինտենսիվ ուժեղացմամբ, երկու ինտոնացիոն կենտրոն մեկ ընդհանուր հարցում, աստիճանաբար մարող մեղեդային պատկեր հատուկ հարցում, անկանոն սինտագմատիկ մասնատում, հնչաշղթայի բառ առ բառ արտաբերում՝ բառային շեշտի ուժեղացմամբ:

- Տեմբրի որակը. կոկորդային տեմբր (խոսքոտ/ոչ խոսքոտ, պարզ/աղոտ, փափուկ/կոշտ, պողպատյա/թավշյա, սեղմված/ազատ, շնչառական, խուլ/հնչեղ և այլն)

Ենթակոկորդային (ոնգայնություն, սուլական, շչական, ոնգային/ոչ ոնգային, խուլ/հնչեղ, աղմկային/տոնային)

Տեմբրի բնականություն (նորմալ/աղավաղված, բնական/անբնական, ձևական, բնական/արհեստական:

Առդիտիվ խմբի հատկանիշների մեծ մասը կարող են բացահայտվել խոսքային հոսքի վերլուծության ընթացքում, այսինքն բնութագրում են խոսողի ընդհանուր խոսքը, և, հետևաբար, վերաբերում են ընդհանուր նույնականացման հատկանիշներին:

Այսպիսով, բանավոր խոսքը բնութագրող լսողական հատկանիշների հետազոտությունը մյուս փորձագիտական մեթոդներին զուգահեռ դատական փորձագիտության ոլորտում փորձագետին հնարավորություն է տալիս կատարել խոսողի նույնականացում:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. А.Ш.Каганов, Криминалистическая экспертиза звукозаписей.-М.: Издательство «Юрлитинформ», 2005, стр. 73:

2. Сборник научно-методических рекомендаций по выполнению криминалистических экспертиз звукозаписей речи, Центр речевых технологий, Санкт-Петербург, 2001, стр. 46:

3. Օհանյան Լ.Պ., Կրիմինալիստիկական Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 362:

### **РЕЗЮМЕ**

#### **ПРИМЕНЕНИЕ В СУДЕБНОЙ ЭКСПЕРТИЗЕ АНАЛИЗА ЗВУЧАЩЕЙ В АУДИОЗАПИСЯХ РЕЧИ**

***Տ.Գ.ՍԱՊԻԿՅԱՆ***

Выявление идентификационных качеств (темп речи, мелодичность, дикция, тембр, речевое дыхание и др.) в судебной экспертизе с помощью методов исследования голоса и звучащей речи в аудиозаписях, позволяют эксперту определить в исследуемом устном материале говорят одни и те же люди, или разные личности.

### **SUMMARY**

#### **ANALYSIS OF SPEECH IN AUDIOVISUAL RESEARCH USED IN FORENSIC EXAMINATION**

***S.G.PAPIKYAN***

The article refers to the detection of identification features in audio records with methods of audiovisual research of voice and oral speech in forensic science (speech, tempo, melodiousness, diction, timbre, verbal respiration and etc.), which enable experts to decide whether it is the same person's voice or different one in an analyzed oral speech.

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 0010,  
Երևան, Տիգրան Մեծի 17  
e-mail: dayanakarapetyan@mail.ru*

Հայտնի է, որ յուրաքանչյուր տարածաշրջանի լանդշաֆտները և դրանք ձևավորող բաղադրամասերը ուղղակի կամ անուղղակիորեն ունեն որոշակի ազդեցություն տեղի բնակչության ապրելակերպի կազմակերպման, բնական ռեսուրսների օգտագործման և այլ գործունեության վրա: Սակայն լանդշաֆտները անմիջական ազդեցություն կարող են ունենալ նաև տվյալ տարածաշրջանում բնակվող ժողովրդի հոգևոր և մշակութային առանձնահատկությունների ձևավորման վրա: Լանդշաֆտների և բնակչության կենցաղավարության անմիջական փոխներգործությունը առավել նկատելի է հատկապես լեռնային բնատեխնածին գեոհամակարգերում:

Հողվածում Բարձր Հայքի, Վիրահայոց և Շիրակի տարածաշրջանների օրինակով բացահայտվում է լեռնային լանդշաֆտների ազդեցությունը տեղի բնակչության հոգևոր և մշակութային կյանքի վրա: Հատկանշական է նաև այն, որ լանդշաֆտը շատ դեպքերում ծառայել է որպես ներշնչանքի աղբյուր գեղեցիկի նկատմամբ անտարբեր չհանդիսացող տեղի բնակիչների համար: Ուսումնասիրելով նորահարսի տարագի զարդանախշերը, հստակ պատկերացում կարելի է կազմել այդ լանդշաֆտներում տարածված և մարդու կողմից օգտագործվող հիմնական բուսատեսակների մասին, որոնք գեղարվեստական ռճավորումից հետո, դարձել են զարդանախշեր:

**Բանալի բառեր.** լանդշաֆտ, ազգային տարագ, վարդ-թանթանա, լանդշաֆտի տարր, բուսական զարդանախշ

**Ներկայացված է խմբագրություն 10.12.16թ**

<<Լանդշաֆտ>> տերմինը ունի լայն միջազգային տարածում: Այն փոխառնվել է գերմաներեն խոսակցական լեզվից, որտեղ die Landchaft նշանակում է <<Երկրիպատկեր>>, <<տեղանքի պատկեր>>, և մտել է գիտական շրջանառության մեջ [1,2]: Անգլերեն հոմանիշն է Landshape, իսկ ֆրանսերենում դրան համապատասխան է Paysage բառը: Լանդշաֆտի մասին ուսմունքի հիմնադիր Վ. Դոկուչանն է [3]: Այս գիտության ակունքները շատ հին են: Անհիշելի ժամանակներից մարդկանց ամենօրյա իր մանրամասնություններով գործունեությունը անխուսափելիորեն պահանջ է ներկայացրել՝ ճանաչել շրջակա տարածքը, նրա առանձին մասերը, որոնք միմյանցից տարբերվում են ռեսուրսներով, տնտեսության վարման պայմաններով և այլ հատկանիշներով: Դեռևս հին դարերում, տարբեր ժողովրդների մոտ գործնական պահանջ է առաջացել փորձնական պատկերացում կազմել բնական համալիրի վերաբերյալ: Օրինակ՝ տայգայի մասին էմպիրիկ պատկերացումն ներառում էր ոչ միայն բուսականություն, այլև բնությանը բնորոշ և առանձնակի գծեր՝ խիստ կլիմա, առատ ձյունով ձմեռներ, պողոզային հողեր, ցրտադիմացկուն բույսեր, ցրտադիմացկուն կենդանիների առկայություն և այլն: Նույնը կարելի է ասել անապատների, մարգագետինների, տափաստանների մասին:

Մարդկության պատմական զարգացման ընթացքում տնտեսության վարման ժամանակ, պահանջ է զգացվել նաև կատարելու բնական ռեսուրսների բազմակողմանի հաշվառում, որից էլ բխել է տարածքային շրջանացման հարցերը: 19-րդ դարում Վ.Վ. Դոկուչանը հանդես եկավ բնական երևույթներն իրարից անջատ ուսումնասիրությունների դեմ: Նա նշում էր, որ սովորենք ղեկավարել բնական պրոցեսները, դրա համար անհրաժեշտ է կարդալ և ընկալել բնությունն ամբողջովին և ոչ թե դրա առանձին մասերը: Նման մոտեցում մենք կարող ենք դիտարկել և մեր ազգագրական, ոչ գիտական ուսումնասիրությունների մեջ: Վ. Դոկուչանը գործնականում առաջինն իրագործեց տարածքների բնական պայմանների ուսումնասիրման կոնկրետ համալիրային մեթոդը: Կյանքի վերջին տարիներին նա հանգեց այն մտքին, որ անհրաժեշտություն է զգացվում կենդանի և անկենդան բնական գործոնների փոխհարաբերությունների և փոխազդեցությունների վերաբերյալ նոր գիտության ստեղծման համար, որի մասին նա որոշել էր գրել հատուկ աշխատանք, բայց անժամանակ մահը անկատար թողեց այդ երազանքը: Այդ աշխատանքի սկիզբը կարելի է համարել Վ. Դոկուչանի բնական զոնաների մասին ուսմունքը: Նա առաջինն էր, որ զոնաները դիտեց որպես բնական համաերկրային օրենք: Ըստ Վ. Դոկուչանի բնական կամ բնապատմական ամեն մի զոնա օրինաչափ համալիր է, ուր կենդանի և անկենդան բնության երևույթներ իրար հետ սերտ կապակցված են և փոխպայմանավորված: Նա չհասցրեց նաև որոշակի անվանում տալ այդ գիտությանը:

Սակայն Վ. Դոկուչանի աշակերտները զարգացրին նրա առաջ քաշած տեսությունը: Լ. Բերգը Դոկուչանի բնական զոնաները համարում էր լանդշաֆտային զոնաների և բնական երևույթներ հարաբերությունների մասին գիտությունը՝ լանդշաֆտային աշխարհագրություն [4,5]: Վ. Դոկուչանի մի այլ աշակերտ՝ Ա. Կրասնովը նշում էր, որ աշխարհագրությունը պետք է ուսումնասիրի բնական երևույթների տարածքային համակեցությունները: Այսպիսով լանդշաֆտի մասին գիտությունն իր տեսական հիմնավորումը ստացավ աշխարհագրական համալիրների /բնական զոնաների/ վերաբերյալ դոկուչանյան հայեցակարգից: Հետագայում այն զարգացավ ու կոնկրետացվեց ռուսական սովետական բնագետ աշխարհագետների կողմից: Ավելացնենք, որ գիտության մեջ լանդշաֆտ հասկացությունը մտցրել է Լ. Բերգը: Նա առաջինն էր, որ 1913 թ. արտահայտեց այն միտքը, որ հենց լանդշաֆտն է հանդիսանում ֆիզիկական աշխարհագրության ուսումնասիրության առարկան: Այդ ժամանակ Լ. Բերգը լանդշաֆտը դիտարկում էր որպես բնական որոշակի շրջան, որտեղ ռելիեֆի բնույթը, կլիման, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը, բնակչությունը և մշակույթը միահյուսված են որոշակի ամբողջությամբ:

Ուսումնասիրելով միջազգային լանդշաֆտագիտության հարուստ փորձը, մենք կարող ենք զուգահեռներ անցկացնել մեր հայրենիքին բնորոշ լանդշաֆտների, դրանց առանձնահատկությունների, տեղի բնակչության գիտական և տնտեսական գործունեության, մարդու և լանդշաֆտի անմիջական կապերի ու վերջապես նրա մշակութաբանական գործունեության վրա թողած ազդեցությունների վերաբերյալ: Դրանով իսկ հնարավոր է դառնում ուսումնասիրել ու փաստագրել լեռնային լանդշաֆտների ուղղակի և անուղղակի կապերը, փոխներգործությունները, դրանց թողած ազդեցությունները բնակչության մշակութաբանական գործոնների վրա: Նկատի ունենալով այդ հանգամանքը, մենք փորձ ենք արել զուգահեռներ անցկացնելու միջոցով հետազոտել և փաստագրել Բարձր Հայքի, Վիրահայոց և Շիրակի լեռնաշխարհների լանդշաֆտների և բնակչության միջև եղած անմիջական կապերի, դրանց բնույթի, արտահայտման ձևերի և թողած դրական ազդեցությունները:

Ինչպես արդեն նշել ենք, մարդը, որպես լանդշաֆտի բաղկացուցիչ մաս, միևնույն ժամանակ նաև նրա մի մասնիկ, հնարավորություն ունի առանձին բաղադրամասերը իր

ստեղծագործություններում օգտագործել որպես մշակութային սկզբնաղբյուրներ: Ուսումնասիրելով զարդանախշերի յուրօրինակությունը, օրինակ կարող ենք փաստել, որ դրանց ստեղծման համար հիմք են հանդիսացել տվյալ լանդշաֆտների բուսական և կենդանական աշխարհների, ինչպես նաև տվյալ ռելիեֆը խորհրդանշող տարրերը: Նաև կարող ենք հավաստել, որ յուրաքանչյուր տարածաշրջանի ազգագրական արվեստը ուսումնասիրելով հնարավոր է լիարժեք պատկերացում կազմել տվյալ լանդշաֆտներում առկա ինչպես նաև դոմինանտ հանդիսացող և մարդու կողմից օգտագործվող հողային ծածկույթի, բույսերի, կենդանիների և այլ բաղադրամասերի վերաբերյալ: Ինչպես օրինակ էթե մենք մանրամասն ուսումնասիրենք Բարձր Հայքի, Վիրահայոց և Շիրակի ու դրանց շրջակա տարածքների ազգագրական մշակույթի նմուշները, անսխալ կարելի ենք հիմնավորել, որ ծիսական և կենցաղային նպատակներով առավել շատ օգտագործվել են այնտեղ առկա բույսերի որոշակի տեսակներ: Դրանց մի մասը օգտագործվել է զարդակիրառական արվեստում, մի մասը՝ որպես հավելում խոհանոցներում պատրաստվող ճաշատեսակների մեջ և այլն: Հատկանշական է նաև այն, որ լանդշաֆտը շատ դեպքերում ծառայել է որպես ներշնչանքի աղբյուր գեղեցիկի նկատմամբ անտարբեր չհանդիսացող տեղի բնակիչների համար: Դիտարկելով որպես օրինակ Բարձր Հայքի, Վիրահայոց և Շիրակի նորահարսի գլխազարդ «Վարդ- Թանթանան» [նկ. 1] կարելի է թվարկել այդ տաճաշրջաններին հատուկ ալպիական մարգագետինների բուսականության գերիշխող տեսակները [6]:



Նկ. 1

Առանց լանդշաֆտի մորֆոլոգիական մասերի վերաբերյալ ժամանակակից պատկերացումներ ունենալու և հողային ծածկույթի քիմիական բաղադրամասերը իմանալու, գլխազարդի հիմք են ծառայել շագանակագույն կամ տվյալ տարածքի հողածածկին մոտ գույնի թավշյա կտորները: Թավշի ընտրությունը նույնպես պատահական չի եղել: Ըստ երևույթին, դա խորհրդանշել է տվյալ լանդշաֆտներում գերիշխող մարգագետինա-տափաստանային հողերին: Տեղի բնակչության կողմից բուսական տեսակների հնարավորինս ուսումնասիրելուց հետո, նրանք ոճավորել են դրանք և գործվել բնական գույներին մոտ մետաքսյա թելերով:

Հնուտ վարպետները բնօրինակներին հնարավորին չափ նմանակելու նպատակով, փորձ են արել կիրառել նաև զանազան հնարքներ ևս: Ինչպես օրինակ՝ խոտային մասնիկների տարածական դիրքը և ուղղությունը ցույց տալու համար, որպես գործվածքի հիմք օգտագործել են ձիու մազ:



Նկ. 2

Ասեղնագործված ծաղիկները, բույսերը, հատապտուղները, կենդանական աշխարհի տարրերը վկայում են այն մասին, որ մարդն իր կողմից շատ սիրված լանդշաֆտի մի մասն է եղել: Խնամքով ուսումնասիրած ամեն մանրուք վերածել է տվյալ լանդշաֆտի մի փոքրիկ տարրի, խմբագրված մասնիկի առանձին տարբերակի: Գուցե սա բնաճանաչողության միջոց է հանդիսացել և նորահարսին դիտարկել որպես «Գարուն», հարդարել նրան սեփական բնատեղին բնորոշ տարրով: Սա նույնիսկ կարելի է դիտարկել որպես ուսումնական դիտակտիկ նյութ:

Հանրագիտարանների, լաբորատորիաների և այլ գիտական հաստատությունների բացակայությամբ, փորձ է արվել արտահայտել բնատարածքի մի հատված՝ լանդշաֆտի մի մի փոքր տեղամաս: Ենթադրում ենք, որ նման աշխատանքների շուրջ բացատրական աշխատանքներ են տարվել թե վարպետի և թե նրա աշակերտների կողմից: Գուցե հենց պարզագույն այս առաջին փորձերը համարենք նման բովանդակության առաջին լանդշաֆտագիտության փորձնական դասեր:

Յուրաքանչյուր բնական տարրի զարդանախշ ստանալու համար նախ լուրջ ուսումնասիրություն է պետք: Ջարդանախշերի համակարգում բուսական և կենդանական զարդանախշերը մանրակրկիտ կերպով կրկնում են հայրենի բնության հմայքը: Ծաղիկների յուրաքանչյուր մասնիկ գործվել է իր տեսակին համապատասխան: Հատապտուղների հիմքը ստացվել է մոմած թուղթ և բամբակ օգտագործելու, իսկ մորու և այլ հատապտուղների նմուշներ են ստացվել մետաքսյա թելերի յուրահատուկ հանգույցների միջոցով (նկ. 3):



Նկ. 3

Շատ հետաքրքիր է նաև թռչունների առկայությունը գլխազարդի մեջ: Որոշ օրինակներ ուսումնասիրելով, հնարավորություն ունենք պատկերացում կազմելու տվյալ բնատարածքի թռչունների վերաբերյալ: Պարզ հանգույցների միջոցով գործվել էին աքաղաղներ, կաքավիկներ, լորիկներ՝ իրենց գույներին և ոճավորման համապատասխան (նկ. 4): Բացի ժողովրդական, ազգագրական նշանակությունից, կա նաև գիտական հիմք համոզվելու, որ այս թռչունների առկայությանը եղել է նաև Բայձր Հայքի, Վիրահայոց և Շիրակ տարածաշրջանների բնատարածքներում: Գուցե ոմանց համար նույնիսկ պարզունակ թվա ասեղնագործության, զարդարվեստի և լանդշաֆտագիտության կապերը: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն, որ գիտական ուսումնասիրությունների հետազոտություններից զրկված մեր իմաստասեր նախնիները, այդ ամենը ուսումնասիրելու, ստեղծագործելու, կիրառելու, և եկող սերունդներին իրենց փորձը փոխանցելու համար ընտրել են շատ արդյունավետ միջոց:



Նկ. 4

Պետք է փաստել նաև, որ այդ ուղղությամբ մեծ արժեք են ներկայացնում ազգային տարազի այլ էլեմենտները ևս: Թավշյա կտորի առկայությունը վկայում է ցուրտ եղանակի, իսկ մետաքսյա վերնաշապիկները շատ ավելի տաք եղենակի մասին: Հետևաբար ժամանակակից հետազոտությունները էլնելով վստահությամբ փաստել, որ մեր նախնիները շատ ներդաշնակ ապրել են օդի թե -30 և թե + 30 աստիճանների առկայության պայմաններում և զբաղվել հողագործությամբ ու անասնապահությամբ:

Ուսումնասիրելով գլխազարդի մասնիկները այնտեղ նկատում ենք նաև ասեղնագործ տաքդեղը, ինչը վկայում է նախ սննդի մեջ օգտագործվող բանջարեղենի մասին: Պղպեղի /տաքդեղի/ առկայությունն այնտեղ պատահական չի եղել (նկ. 5): Ունենալով հակաճեխիչ, հակաբորբոքային, հակասնկային, ջերմիջեցնող, տաքացնող հատկություններ, ունենալով նաև վիտամին C, B1, B2, P, կարոտինի պղպեղը պարունակել է մարդու օրգանիզմին անհրաժեշտ նաև շատ այլ օգտակար նյութեր:



Նկ. 5

Տեղի բնակչությունը մշակել է ցորեն, գարի, հացահատիկային այլ բույսեր, որոնք հետագայում նույնպես ոճավորվել և վերածվել են հագուստի զարդանախշերի: Տեղական կիսաթանկարժեք քարերը, արծաթյան նրբագեղ զարդերը, յուրաքանչյուրն իր բնատարածքին բնորոշ տարրերով մշակված գիտական մեծ արժեք ներկայացնող, միջառարկայական կապ հանդիսացող և տեղեկատվության փոխանցող կարևոր միջոցներ են:

Ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիք, իրենց վրա կրել են նաև իրանը երկու մասի բաժանող արծաթյա գոտիներ: Մեր համոզմամբ, այդ գոտին հանդիսացել է աշխարհագրական երկու ոլորտները (իրանի վերին հատվածում մթնոլորտն է, իսկ ներքևում՝ քարոլորդի) իրարից բաժանող գիծը:

Հատկանշական է նաև ավանդական քողի առկայությունը: Այս կապակցությամբ կարելի է գուգահեռներ անցկացնել աշուղական գրականության, հագուստի ձևավորման և բնական լանդշաֆտների միջև: <<Երկինքն ամպբող է>> աշուղական տողերը հնարավորինս գեղեցիկ են ներկայացնում քողի առկայությունը հայկական գրականության մեջ: Ժամանակակից հետազոտությունների շնորհիվ, պարզվել է, որ Բարձր Հայքի, Վիրահայքում և Շիրակում մթնոլորտային տեղումները կազմել են մոտ 700 մմ:



Քողազարդ զգեստով նորահարսը համարվել է երկնքով պատված մի էակ: Իսկ բնատարածքի վրա թափվող մթնոլորտային տեղումները՝ բարենպաստ պայման են ստեղծել առատ բերք և բարիք ստանալու համար:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Հեղինակային կոլեկտիվ ՀՍՀ ԳԱ հարս. Երևան 1971
2. Ա. Մնացականյան Հայկական Զարդարվեստ ՀՍՀ ԳԱ հրատ. Երևան 1955
3. В.В.Докучаев Учения о зонах природы, Географгиз, М.,1948
4. Л.С.Берг Физико-географические зоны Советского Союза, 3-ее изд. М. 1977
5. Ф.Н.Мильков Человек и ландшафт, Москва 1973.
6. Г.Б.Григорян Региональное ландшафтная дифференциация территорий Арм.ССР, Изв. АН Арм ССР, Науки о Земле, № 1987

#### **РЕЗЮМЕ**

#### **ВЛИЯНИЕ ЛАНДШАФТА НА БЫТ И НРАВЫ ЧЕЛОВЕКА**

*Д.Г. КАРАПЕТЯН*

В статье рассматриваются особенности влияния ландшафтов горных геосистем на быт, нравы и культурное развитие населения Ширакского, Вираайоцского и Высокоайкского физико-географических регионов Армянского нагорья. В качестве примера, анализированы связи и формы воздействия горных ландшафтов на человека, в частности на выбор и оформление одежды, украшений, организации торжественных и других национальных мероприятий армянского народа.

#### **SUMMARY**

#### **THE IMPACT OF LANDSCAPE ON THE MORES OF HUMAN LIFE**

*D.G. KARAPETYAN*

The article deals with the influence of landscape features of mountain geosystems on human life, mores and cultural development of the population of Shirak, Virahayots, and High Hayk physico- geographical regions of the Armenian Highland. As an example, were analyzed the impact of communication and forms of influence of mountain landscapes on human being, selection of design of clothing, jewelry, organizing celebrations and other national events of the Armenian nation.

## СОДЕРЖАНИЕ

<b>Л.Р. ВАРДАНЯН, Л.В. АТАБЕКЯН, С.А. АЙРАПЕТЯН, Р.Л. ВАРДАНЯН</b> ИССЛЕДОВАНИЕ АНТИОКСИДАНТНЫХ СВОЙСТВ ЭТИЛАЦЕТАТНЫХ ЭКСТРАКТОВ ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЙ.....	5
<b>А.В.БАБАХАНИЯН, С.А.ОВАКИМЯН, М.О.МАНУКЯН, Ж.Р.БАБАЯН</b> ИЗУЧЕНИЕ БАКТЕРИЦИДНОГО ДЕЙСТВИЯ КОМПОЗИЦИЙ В ОТНОШЕНИИ ГРАМПОЛОЖИТЕЛЬНЫХ И ГРАМОТРИЦАТЕЛЬНЫХ МИКРООРГАНИЗМОВ .....	12
<b>Р.С.НЕРСИСЯН</b> РЕГИОХИМИЯ РЕАГИРОВАНИЯ N-ПРОПАРГИЛПИПЕРИДИНА С С-НУКЛЕОФИЛАМИ В ПРИСУТСТВИИ АЦЕТАТА РТУТИ (II).....	17
<b>Г.Х.МУШЕГЯН, Г.К.МАДОЯН, А.Э.АЗИЗЯН, Г.В.САРГСЯН, Г.М.АРАДЖЯН</b> ВЛИЯНИЕ МЕХАНИЧЕСКОЙ ВИБРАЦИИ НА ЗНАЧЕНИЕ ШКАЛЫ БОЛИ И ГИДРАТАЦИИ КОРЫ ГОЛОВНОГО МОЗГА И СЕРДЕЧНОГО СЛОЯ У КРЫС.....	23
<b>С.А.ШОГЕРЯН</b> ИЗУЧЕНИЕ СРАВНИТЕЛЬНОГО ВЛИЯНИЯ РАЗЛИЧНЫХ МУЗЫКАЛЬНЫХ ЖАНРОВ НА УМСТВЕННУЮ РАБОТОСПОСОБНОСТЬ И ВНИМАТЕЛЬНОСТЬ СТУДЕНТОВ С ПРИМЕНЕНИЕМ СОВРЕМЕННЫХ КОМПЬЮТЕРНЫХ ТЕХНОЛОГИЙ.....	32
<b>Г.Г.ДЕМИРХАНИЯН, А.Г.ДЕМИРХАНИЯН, А.А.АРУТЮНЯН</b> РАСЧЕТ ГЕНЕАЛОГИЧЕСКИХ КОЭФФИЦИЕНТОВ РАКА ДЛЯ ИОНА $Er^{3+}$ .....	40
<b>А.С.ТАРОЯН, А.Х.АСАТРЯН, Л.В.АВЕТИСЯН, Н.Н.МХИТАРЯН</b> ЭМПИРИЧЕСКАЯ ФОРМУЛА УГЛОВОГО РАСПРЕДЕЛЕНИЯ ИНТЕНСИВНОСТИ КОСМИЧЕСКИХ ЧАСТИЦ .....	46
<b>Ф.С.КАРАПЕТЯН, Р.С.САКАНЯН</b> ОПРЕДЕЛЕНИЕ НЕКОТОРЫХ ФИЗИЧЕСКИХ ХАРАКТЕРИСТИК МЕТАЛЛОВ И ПОЛУПРОВОДНИКОВ ИСХОДЯ ИЗ ТЕМПЕРАТУРНОЙ ЗАВИСИМОСТИ СОПРОТИВЛЕНИЯ.....	52
<b>М.М.АРАКЕЛЯН, А.М.ПЕТРОСЯН</b> ПРЕДЕЛЬНЫЕ АМПЛИТУДЫ СИЛЬНЫХ ЗВУКОВЫХ ВОЛН В ТОНКИХ ПОЛУПРОВОДНИКОВЫХ ПЛЕНКАХ.....	58
<b>С.А.АРАКЕЛЯН</b> ГЕОЛОГИЯ И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЭКОТУРИСТИЧЕСКОЙ ОЦЕНКИ ПРИРОДНЫХ ПАМЯТНИКОВ ДОЛИНЫ РЕКИ АЗАТ.....	62
<b>Г. С.БАРСЕГЯН, А.В.ХОЕЦЯН</b> ПРОЯВЛЕНИЯ ВЗАИМОСВЯЗИ ПРОБЛЕМ ИЗМЕНЕНИЯ КЛИМАТА, ОПУСТЫНИВАНИЯ И СОХРАНЕНИЯ БИОРАЗНООБРАЗИЯ В ТЕРРИТОРИИ РА.....	67
<b>С.Ц.ДАЯН, А.П.АКОПЯН</b> ЭКОЛОГИЧЕСКАЯ ОЦЕНКА МАЛЫХ ГИДРОЭЛЕКТРОСТАНЦИЙ И ПРОБЛЕМЫ ОХРАНЫ ПРИРОДЫ БАССЕЙНА РЕКИ ГЕТИК.....	74

<b>А.С.ГАСПАРЯН, Н.И.САМВЕЛЯН</b> ФЛОРИСТИЧЕСКОЕ РАЗНООБРАЗИЕ И КЛАССИФИКАЦИЯ БИОРЕСУРСОВ РАСТИТЕЛЬНОСТИ БАСЕЙНА РЕКИ АЗАТ.....	80
<b>М.А.ГРИГОРЯН, Г.С.НЕРСИСЯН</b> ВОПРОСЫ ГОРОДСКОГО ОЗЕЛЕНЕНИЯ В КОНЦЕПЦИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ.....	89
<b>Г.М.КАРАПЕТЯН, А.Г.КАРАПЕТЯН</b> РАЗВИТИЕ КАРТОВЕДЕНИЯ И КАРТОГРАФИИ И СОВРЕМЕННЫЕ ИХ ПРОБЛЕМЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.....	94
<b>Н.И.САМВЕЛЯН, А.С. ГАСПАРЯН, Р. Ю.САРКИСЯН</b> ВЫСОТНО-ПОЯСНАЯ СТРУКТУРА И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РЕКРЕАЦИОННОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ЛАНДШАФТОВ БАСЕЙНА РЕКИ МАРМАРИК.....	100
<b>В.С.СААКЯН</b> ОТНОСИТЕЛЬНАЯ ОЦЕНКА ЖИЗНЕННОГО СОСТОЯНИЯ ДРЕВОСТОЕВ.....	106
<b>С.Г.ПАПИКЯН</b> ПРИМЕНЕНИЕ В СУДЕБНОЙ ЭКСПЕРТИЗЕ АНАЛИЗА ЗВУЧАЩЕЙ В АУДИОЗАПИСЯХ РЕЧИ.....	111
<b>Д.Г.КАРАПЕТЯН</b> ВЛИЯНИЕ ЛАНДШАФТА НА БЫТ И НРАВЫ ЧЕЛОВЕКА.....	116

## CONTENT

<b>L.R.VARDANYAN, L.V. ATABEKYAN, S.A.HAYRAPETYAN, R. L.VARDANYAN</b> THE STUDY OF ANTIOXIDANT PROPERTIES OF ETHYLACETATE EXTRACTS OF MEDICINAL PLANTS.....	5
<b>A.V.BABAKHANYAN, S.A.HOVAKIMYAN, M.O.MANUKYAN, ZH.R.BABAYAN</b> THE STUDYING OF BACTERICIDIC ACTION OF THE COMPOSITIONS WITH RESPECT TO GRAM POSITIVE AND GRAM NEGATIVE MICROORGANISMS .....	12
<b>H.S.NERSISYAN</b> REGIOCHEMISTRY OF INTERACTION OF N-PROPARGYLPYPERIDINE WITH C-NUCLEOPHILES IN THE PRESENCE OF MERCURY(II) ACETATE.....	17
<b>G.KH.MUSHEGHYAN, G.K.MADOYAN, A.E.AZIZYAN, G.V.SARGSYAN, G.M. ARAJYAN</b> THE EFFECT OF MECHANICAL VIBRATION ON THE CELL HYDRATION IN RAT BRAIN CORTEX AND CARDIAC TISSUES AND PAIN THRESHOLD.....	23
<b>S.A.SHOGHERYAN</b> COMPARATIVE STUDY OF THE INFLUENCE OF ROCK AND CLASSICAL MUSIC ON THE MENTAL EFFICIENCY AND ATTENTIVENESS OF THE STUDENTS BY USING MODERN COMPUTER TECHNOLOGIES.....	32
<b>G.G.DEMIRKHANYAN, H.G.DEMIRKHANYAN, A.H.HARUTYUNYAN</b> CALCULATIONS OF RACAH'S GENEALOGICAL COEFFICIENTS FOR $ER^{3+}$ ION .....	40
<b>A.S.TAROYAN, A.K.ASATRYAN, L.V.AVETISYAN, N.N.MKHITARYAN</b> ON THE EMPIRICAL FORMULA OF THE ANGULAR DISTRIBUTION OF THE INTENSITY OF COSMIC PARTICLES .....	46
<b>F.S.KARAPETYAN, R.S.SAKANYAN</b> DETERMINATION OF SEVERAL PHYSICAL CHARACTERISTICS OF METALS AND SEMICONDUCTORS BASED ON THE DEPENDENCE OF RESISTANCE ON TEMPERATURE.....	52
<b>M.M.ARAKELYAN, A.M.PETROSYAN</b> LIMITING AMPLITUDES OF THE STRONG SOUND WAVES IN THIN SEMICONDUCTOR FILMS.....	58
<b>S.A.ARAKELYAN</b> AZAT RIVER ALLEY GEOLOGY AND SOME ASPECTS OF THE NATURAL MONUMENTS, FOR ECOTOURISM ASSESSING.....	62
<b>G. S.BARSEGHYAN, A.V.KHOETSYAN</b> MANIFESTATIONS OF RELATIONSHIPS CLIMATE CHANGE, DESERTIFICATION AND BIODIVERSITY IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA.....	67
<b>S.TS.DAYAN, H.P.HAKOBYAN</b> THE ASSESSMENT OF SMALL WATER POWER PLANTS OF GETIK RIVER AND THE ENVIRONMENTAL ISSUES OF THE RIVER BASIN.....	74
<b>A. S. GASPATYAN, N.I.SAMVELYAN</b> FLORISTIC DIVERSITY OF AZAT RIVER'S BASIN AND ECONOMIC CLASSIFICATION OF THE VEGETATIONAL POTENTIAL.....	80

<b>M.A.GRIGORYAN, G.S.NERSISYAN</b> URBAN GREENING ISSUES IN THE LIGHT OF SUSTAINABLE DEVELOPMENT.....	89
<b>G.M. KARAPETYAN, A.G KARAPETYAN</b> THE DEVELOPMENT OF CARTOGRAPHY AND MAPPING IN RA OVER AND THEIR CURRENT PROBLEMS .....	94
<b>N.I.SAMVELYAN, A.S.GASPARYAN, R.Y.SARGSYAN</b> MARMARIK RIVER BASIN'S LANDSCAPE UPWARD-ZONAL STRUCTURE AND SOME PROBLEMS OF ITS RECREATIONAL USE.....	100
<b>V.S. SAHAKYAN</b> THE RELATIVE DEFINITION OF VIABILITY OF TREES.....	106
<b>S.G.PAPIKYAN</b> ANALYSIS OF SPEECH IN AUDIOVISUAL RESEARCH USED IN FORENSIC EXAMINATION.....	111
<b>D.G.KARAPETYAN</b> THE IMPACT OF LANDSCAPE ON THE MORES OF HUMAN LIFE.....	116